

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԸ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ (1861-1915)

Գրիգոր Զոհրապն ունեցել է կարճատեւ, սակայն իմաստալից ու լեցուն կեանք: Նա ինտելեկտուալ մեծ հնարաւորութիւններով օժտուած անհատականութիւն էր, որի ցայտուն դրսեւորումը նրա գործունէութեան բազմակողմանիութիւնն էր՝ հրապարակախօս, բանաստեղծ, վիպագիր, արձակագիր, լրագրող, խմբագիր, գրաքննադատ, կենսագիր, իրաւաբան, փաստաբան, ճարտասան, պետական ու ազգային գործիչ, որոնք արժանավայելօրէն ցուցադրում են առեղծուածային կեանքը մի անձնաւորութեան, ով իսկապէս եզակի էր բացառիկների մէջ եւ եզակի մընաց մինչեւ վերջ: Նրա սերնդակիցներից թերեւս ոչ ոք առ այսօր չի ունեցել ուսումնասիրման այնպիսի լայն պարագիծ, որին արժանացել է Գրիգոր Զոհրապը: Նա ամենափնտրուած, ուսումնասիրուած, սակայն երբեք չսպառուած եւ մեծ հետաքրքրութիւն ներկայացնող գործի մտաւորականներից է արեւմտահայ մշակութային կեանքում:

Տարբեր ժամանակներում եւ տարբեր առիթներով ուշագրաւ աշխատութիւններով հանդէս են եկել Արշակ Ալպոյաճեանը (1889-1962)¹, Հրանտ Ասատուրը (1862-1928)², Ստեփան Շապազը (1900-1984)³, Յակոբ Սիրունին (1890-1973)⁴, Ալբերտ Շարուրեանը (1931-2007)⁵ եւ ուրիշներ:

Անուանի գրողի եւ հրապարակախօսի կեանքին ու գործին առնչուող տեղեկութիւններ եւ արժէքաւոր ծանօթագրութիւններ

1 Ա.ԼՊՈՅԱՃԵԱՆ, Ա., *Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ*, (իւ կեանքը եւ իւ գործը), տպ. վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան եղբայր, Կ. Պոլիս 1919:

2 Ա.ՍՍՏՈՒՐ, Հ., *Դիմաստուերներ*, Կ. Պոլիս 1921:

3 ՇԱՀՊԱԶ, Ա., *Գրիգոր Զոհրապ*, տպ. Սեւան, Պէյրութ-1959:

4 ՍԻՐՈՒՆԻ, Յ., *Գրիգոր Զոհրապ*, անտիպ, Բ. մաս, ԳԱԹ, Ստ. Կուրտիկեանի ֆոնդ:

5 ՇԱՐՈՒՐԵԱՆ, Ա., *Գրիգոր Զոհրապի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն*, Ս. Էջմիածին 1996:

են ընդգրկում նաեւ Թորոս Ազատեանի (1898-1953), Արփիար Արփիարեանի (1851-1908), Տիգրան Արփիարեանի (1854-1915), Արշակ Զոպանեանի (1872-1954), Արամ Անտոնեանի (1875-1952), Հռիփսիմէ Սերինկիւլեանի (1886-1975), Վահան Թեքէեանի (1878-1945), Զապէլ Եսայեանի (1878-1943) եւ այլոց թողօնները՝ նամակներ, գրութիւններ, նօթագրութիւններ, գրառումներ, վկայութիւններ, յիշատակութիւններ, յուշագրութիւններ եւ այլն⁶։

Գր. Զոհրապն ապրել է հարուստ ու շռնդալից կեանքով եւ ունենալով գործունէութեան յախուռն ու բազմաբովանդակ տարեբրութիւն, ազգային, քաղաքական, գրական եւ մշակութային մտքի պատմութեան մէջ թողել է անկորնչելի հետք։ Նրա գրական-բանասիրական տաղանդը ճիշտ ըմբռնելու եւ գնահատելու համար, առաջին հերթին պէտք է թափացնել նրա հարուստ ներաշխարհը, ընկալել նրան որպէս վառ անհատականութիւն, քանի որ գրականութիւնը «մեքենակաւ արեւստ մը չէր» հանճարեղ գրողի համար եւ ոչ էլ սոսկ պատահական մի ասպարէզ, այլ մշտապէս ճշմարիտը, գեղեցիկը, բարին, որոնող ինքնաբուխ, խիզախ եւ աննկուն ոգու արտայայտութիւնն էր։ Իսկ Զոհրապեան ոգին անսահման մեծ ու հզօր էր՝ զերծ ամէն տեսակ պայմանականութիւններից, նախապաշարումներից, գոեհիկ սովորոյթներից ու մոլութիւններից։ Զարմանահրաշօրէն նրա արտաքինը ներդաշնակ էր իր անհատականութեանը։ Միջհասակ եւ ամուր կազմուածքով, խորիւտ կեցուածքով, տիրական ձայնով, բանիմաց եւ լրջախոհ նայուածքով։ Նա անհաշտ էր սին փառքի եւ կեղծ մեծութիւնների հանդէպ։ Զէր ընդունում միջակութիւնն ու կեղծիքն արուեստում եւ գրականութեան մէջ։ «Կարելի է ըսել, գրում է Ստեփան Շահպազը, - թէ անսայթափօրէն, շարունակ գաղափարի մարդը եղաւ, ինչպէս եւ յանդուգն՝ երբ պետք մկատեց արդարութիւնը պաշտպանել։ Փաստաբան ըլլալուն համար չէր որ ճշմարտութիւնը եւ արդարութիւնը պաշտպանեց. այլ իր մէջ, իր հետը ծնած էր ճշմարտութեան եւ արդարութեան սերը։ Զսակարկեց երբեք կեղծիքին հետ»⁷։

Գր. Զոհրապը ծնուել է 1861ի յունիսին Կ. Պոլսի Պէշիկ-թաշում սեղանաւոր (սարաֆ) Զպուքչի Խաչատուրի ընտանիքում։

6 Գր. Զոհրապի հարուստ արխիւը բռնագրաւուել է նրա ձերբակալման ժամանակ, սակայն կնոջն ու աւագ դստերը յաջողուել է փրկել դրա մի մասը, որը անցեալ դարի 70ականների կեսերին յանձնուել է ԳԱԹին, ինչպէս նաեւ ՀՊԿԱՅին եւ Մատենադարանի կաթողիկոսական դիւանին։

7 ՄՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶ, Դրիգոր Զոհրապ, Պէյրութ 1959, 65։

Հայրը սեղանաւորների պետ էր, գործուն մասնակցութիւն է ունեցել Պէշիկթաշի թաղային գործերին, եղել է Մաքրուհեան վարժարանի մնայուն խնամակալ: Նրանց գերդաստանը սերել է Անիի եւ Արաբկիրի միջեւ գտնուող Զոհրապ գիւղից (յիշեալ գիւղի անունով էլ ստուգաբանւում է նրանց տոհմանունը): Գերդաստանի նախահայրեր խաչատուր եւ Ալիքսան եղբայրները Զոհրապ գիւղից տեղափոխուել են Ակն, որտեղ խաչատուրը դարձել է կառավարիչ, իսկ եղբայրը՝ արկղակալ: Ակնում բարձր դիրք է ունեցել նաեւ խաչատուրի որդի Անտոնը, որը ԺԸ. Դարավերջին ենթարկուելով հալածանքների տեղափոխուել է Կ. Պոլիս: խաչատուրը եւ Սարգիսը Անտոնի որդիներն էին, որոնք Պոլսում յայտնի էին Զպուլքճի (չիբուխագործ) մականուամբ:

Զոհրապեան գերդաստանը տուել է անուանի մարդիկ: Նըրանցից մէկը 1846 թուականին հրատարակել է անգլերէն առաջին գիրքը թուրքիայի մասին, որը մեծ ընդունելութիւն է գրտել՝ հռչակ բերելով հեղինակին: Գերդաստանի մէկ այլ անդամ հիւպատոս էր Կարինում: 80ական թուականներին նրանց տոհմից եգիպտական զինուած ուժերում ծառայել է մի գնդապետ: Կ. Պոլսում Անգլիայի դեսպան էղուարդ Թորնդընը եւ դեսպանութեան քաղաքական թարգման Ալֆրեդ Սանդիսը մայրական կողմից ազգակցական կապեր են ունեցել Զոհրապեանների հետ⁸: Նրանց գերդաստանում եղել են ինչպէս լուսաւորչականներ, այնպէս էլ բողոքականներ ու կաթոլիկներ: Զոհրապի հայրը եւ հօրեղբայրները լուսաւորչականներ էին:

Ակնը⁹ Հին Հայաստանի այն եզակի քաղաքներից մէկն է, որը թողել է ոչ միայն հայագիտութեան, գրականութեան եւ ժո-

8 ՇԱՐՈՒՐԵԱՆ, Ա., Գրիգոր Զոհրապի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն, Ս. Էջմիածին 1996, 13-14:

9 Պատմական աղբիւրները հաւաստում են, որ Ակնը կառուցուել է 1021 թուականին Սեբաստիա տեղափոխուած եւ յետագայում այնտեղից տարագրուած Արծրունիների եւ Անիից գաղթած հայերի կողմից: Ակնը տեղակայուած է Արեւմտեան Եփրատի (Կարասու) աջ ափին: Սկզբնաղբիւրներում նրա անունը յիշատակուել է Մայրընդուրիկ (Գ. Սրուանդ-տեանցի ստուգաբանութեամբ՝ Մայրընդումակ, տե՛ս ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Գ., Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մասն Ա., Կ. Պոլիս 1879, 250), թուրքական աղբիւրներում այն կոչուել է Էգին, իսկ յետագայում՝ Քեմալի» անուններով: 1885ի մարդահամարի տուեալներով Ակնում բնակուել է 10.000 մարդ, որից 5442ը՝ հայեր էին: Ակնը ուներ 100ից ւելի փոքր ու մեծ հայկական գիւղեր: Մինչեւ ցեղասպանութիւնը Ակ-

ղովրդական բանահիւսութեան հարուստ ժառանգութիւն, այլեւ տուել է գիտութեան ու մշակոյթի բազմալատակ մշակներ՝ գրողներ, արուեստագէտներ, ուսուցիչներ, բժիշկներ, իրաւագէտ-փաստաբաններ, բարձրաստիճան եկեղեցականներ, պետական ու քաղաքական գործիչներ: Ակնից են սերել Նիկոլ Գալանտէրեանը (1881-1944), Էդգար Շահինը (1874-1947), Սիամանթոն (Ատոմ Եարաճանեան 1878-1915), Միսաք Մեծարենցը (1886-1908), Արփիար Արփիարեանը, Արշակ Զոպանեանը, Մինաս Զերազը (1852-1929) եւ ուրիշներ: Աւելի քան երկու դար Ակնը ամիրայական նշանաւոր գերդաստաններ է տուել Կոստանդնուպոլսին եւ Զմիւռնիային՝ Տատեաններ, Ճիզայիրլեաններ, Դիւզեաններ, Թէրզեաններ, Խօճասարեաններ, Դիւրիւններ եւ այլք: Ակնը տուել է նաեւ ուսուցիչների փառահեղ սերունդ՝ Սարգիս Գասպարեան, Մուրադ Վարժապետ, Հայկազուն Պեկեան, Աբրահամ Մուրադեան, Նշան Թորոսեան, Վահան Արծրունի եւ ուրիշներ: Ակնեցիները Վասպուրականի եւ Անիի իշխանական գերդաստանների այն գտարիւն շառաւիղներն էին, որոնք պատմաաշխարհագրական նոր միջավայրում եւ կեանքի անսովոր պայմաններում կարողացել են անաղարտ պահել իրենց փառահեղ նախնիների իշխանական սովորոյթները, տոհմիկ բարքերն ու աւանդոյթները եւ իրենց բնորոշ էթնիկ առանձնայատկութիւնները՝ մտքի ճկունութիւնը եւ խորութիւնը, հնարամտութիւնը, խոհական դատողութիւնը, ձեռներէցութիւնը, արժանապատուութիւնը, նախանձախնդրութիւնը, վայելչասիրութիւնը, նրբաճաշակութիւնը, իրականութիւնը ճանաչելու խոհափիլիսոփայութիւնը, որոնք հրմտօրէն արտապատկերուել են իրենց ստեղծագործութիւններում, կառուցած եկեղեցիների, վանքերի, ապարանքների եւ տների ճարտարապետական հոյակերտ յորինուածքներում:

Էթնօպատմամշակութային տիպական այդ գծերը առաւել ցայտուն դրսեւորուեցին Գր. Զոհրապի ներաշխարհում եւ ստեղծագործութիւններում: Այդ մասին վկայում է նաեւ Ա. Ալպոյաճեանը. «Զոհրապ իր Ակնցի մախապերէն ժառանգած ըլլալ կը թուի մասնաւորապէս իր երեւակայելու, ստեղծագործելու, ոգեւորուելու եւ քերթելու ընդունակութիւնը, որ առհաւութեամբ (ժա-

նը գտնուել է Արեւմտեան Հայաստանի Խարբերդի վիճակում: Ներկայումս այն գտնուում է Թուրքիայի Երզնկա վիլայեթում (այս մասին մանրամասն տե՛ս ՈՍԿԱՆԵԱՆ, Շ., Ակնը եւ նրա մշակութային կեանքը ցեղասպանութեան մախաշեմի, ի «Համդէս Ամսօրեայ», ՃԺԸ տարի, 2004 յունուար-դեկտեմբեր, քիւ 1-12, Վիեննա, 459-474):

ռանգականութեամբ՝ Շ. Ո.-) մը կը զարթնուր իր մէջ, իր ստացած դպրոցական կրթութեան հետեւանօք: Ակն, բովանդակ Հայաստանի մէջ միակ քաղաքն է որ մեզի տուած է ոչ միայն ժողովրդական լաւագոյն բանաստեղծութիւնները այլ նոր բանաստեղծներու եւ գրողներու լաւագոյնները: Նոյնպէս Ակնայ բնակիչներուն գործունեայ նկարագիրը, նախաձեռնարկ ոգին, քախտախնդրութեան մօտեցող յանդգնութիւնը, բնածին եւ ոչ ստացական ուշիմութիւնը, պատրաստաբանութիւնը, չարութեան մօտեցող սքանչելիութիւնը, այս ամենն, դեռ կ'ապրէին Զոհրապին մէջ, իբր հարագատ սերունդը Ակնեցիներու...»¹⁰:

1897ի աշնանը Զոհրապը Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանի¹¹ ծաղկոցի սան էր: Նրա ուսուցիչը տիրացու Արթինն էր, որի նախասիրած դաստիարակութեան մեթոդը ֆալսխան էր: 1868ի ամրանը Զոհրապն աւարտելով ծաղկոցը անցել է նախկին վարժարանի Ա. կարգը, իսկ 1869 թուականին փոխադրուել ուսումնարանի Ա. կարգը: Այստեղ ուսանելու տարիներին աչքի է ընկել Դանիէլ եւ Եգեկիէլ մարգարէների գրքերը կարդալով, մասնակցել է նաեւ եկեղեցիական երգեցողութեանը, ինչի համար հայրը խրախուսել է նրան եւ նուէրներ ուղարկել ուսուցչին¹²: Ուսանելու հետ մէկտեղ ազատ ժամերին Զոհրապն օգնել է հօրը սեղանաւորական գործերում: Այդ մասին նա իր յիշողութիւններում գրում է. «Ղալաթիայ, խանի մը մէջ, հօրս բով կը ծառայէի,

10 Ա.Լ.ՊՈՅԱՃԵԱՆ, Ա.Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կեանքը եւ իր գործը), Կ. Պոլիս 1919, 227:

11 Մաքրուհեան վարժարանը կառուցուել է 1864 թուականին՝ Սարգիս Պալեանի (1831-1899) նախագծով եւ Առաքել Սիսակ Տատեանի (1826-1886) մեկենասութեամբ: Քարաշէն, երկյարկանի վարժարանի շինարարական աշխատանքներն աւարտուել են 1866 թուականին: Այն անուանակոչուել է Տատեանի վաղամեռիկ դստեր՝ Մաքրուհու (1842-1863) անունով: Վարժարանն ուներ մէկամեայ ուսումնառութեամբ ծաղկոց, որտեղ դասաւանդուել են հետեւեալ առարկաները՝ ընթերցանութիւն հանդերձ Ա. Լետարանով, հասարակ գիր, թուանշան գրեաց, կարդալ, աղօթք եւ կրօնական հրահանգ: 1868ին վարժարանի տնօրինութիւնը ստանձնել է Պէշիկթաշի քաղաքի եւ քաղաքի վարժարանների վերատեսուչ Խորեն Նարայէլը, որի ջանքերով դպրոցը հասել է «քարձրագոյն վիճակի», ուսման յայտագրում մտցուել են նոր առարկաներ՝ բարձրագոյն թուարանութիւն, երկրաչափութիւն, գծագրութիւն եւ տոմարագիտութիւն:

12 Նրա երաժշտութեան ուսուցիչը ուսումնարանի կառավարիչ ճայմաւոր Գասպարն էր:

ամէն օրուան ապրուստս էր 30 փարայի ֆասուլի եւ տասը փարայի հաց»¹³։

Հօր մահից յետոյ (1870) նրանց ընտանիքը տեղափոխուեց Օրթագիւղ, որտեղ բնակութիւն հաստատեցին Եորտամի լեռ թաղամասում¹⁴։ Զոհրապը 1870-73 թուականներին ուսումը շարունակել է Օրթագիւղի «Թարգմանչաց» վարժարանի Բ., Գ., Դ. կարգերում։ Այստեղ ուսանելու տարիներին մեծ խանդավառութեամբ դիտել է «Բարեսիրաց»ի ներկայացումները¹⁵։ Նա տեսել է Թովմաս (1843-1901) եւ Պայծառ (1845-1920) Ֆասուլաճեաններ, Երանուհի (1848-1924) եւ Վերգինէ (1856-1933) Գարազաշեանների, Ազնիւ Հրաչեայի (1853-1920), Մարի Նուարդի (1853-1885) եւ այլոց խաղերը։ Մշտապէս ներկայ է գտնուել Օրթագիւղի լսարանի կազմակերպած բանավէճերին ու բանախօսութիւններին, որոնց պարբերաբար մասնակցել են Մկրտիչ Խրիմեանը (1820-1907), Գրիգոր Օտեանը (1834-1887), Թովմաս Թէրզեանը (1840-1909), Նարպէյը (Խորէն Գալֆայեան 1831-1893), Մինաս Զերազը, Մաղաքիա Օրմանեանը (1841-1918), Մարկոս Աղաբեկեանը (1830-1908) եւ ուրիշներ։

Անյազ հետաքրքրութեամբ ընթերցել է դպրոցի գրչագիր մատենաները, տպագիր գրքերը, հայերէն եւ օտարալեզու մամուլը, որոնք ժառանգութիւն էին մնացել «Վերածնութեան քանդաքան»ից։ «Թարգմանչաց»ում նրան դասաւանդել են Աւետիս Պէրպէրեանը (կրօն եւ հայոց պատմութիւն), Յովհաննէս Սէթեանը (երկրորդական դաստիարակ), Պասկալը, Գաբրիէլ Ներշապուհը, Սիմոն Միքայէլեանը (թուաբանութիւն եւ բնագիտական առարկաներ), Թովմաս Թէրզեանը (հայկաբանութիւն) եւ ուրիշներ։ Ու-

13 «Կալոռ», Կ. Պոլիս 1914, ապրիլ 13, թիւ 42,9։

14 Զոհրապի մայրը երկրորդ անգամ ամուսնացել է ճամաչուած փաստաբան Աւետիս Եորտամեանի հետ։ Նա եղել է գործունեայ մարդ, տարիներ շարունակ վարել է Պատրիարքարանի գործերը, անդամակցել է գանազան ժողովների եւ խորհուրդների։ Տարբերութիւն չի դրել իր եւ կնոջ գաւակների միջեւ։ Մեծ է եղել նրա ազդեցութիւնը Զոհրապի փաստաբան-իրաւաբանի մասնագիտութեան ընտրութեան գործում։

15 1870 թուականին վարժարանի տեսչութիւնը յանձնուել է «Բարեսէր» ընկերութեանը, որը պահում էր մասնագիտացուած քատերախումբ՝ Պետրոս Մաղաքեանի (1826-1891) խմբավարութեամբ։ «Բարեսիրաց»ը մեծացրել է վարժարանի քատերասրահը, տրուել են ներկայացումներ, որոնց հասոյթներով վարժարանը պահել է իր գոյութիւնը։

սոսմանառութեան տարիներին Զոհրապը առանձին հետաքրքրութիւն ունէր ճշգրիտ գիտութիւնների հանդէպ, գրում էր նաեւ «մամրիկ ոտամաւորներ, յաջող շարադրութիւններ»¹⁶, որոնք մշտապէս արժանանում էին ուսուցիչների դրուստանքին ու խրախուսանքին:

1872ին «Բարեսիրաց»ը կազմալուծուեց եւ «Թարգմանչաց»ի հովանաւորութիւնը ստանձնեցին «Ընթերցասիրաց» եւ «Ուսումնասիրաց» ընկերութիւնները: Մէկ տարի անց նիւթական միջոցների սղութեան պատճառով այս ընկերութիւնները նոյնպէս կազմալուծուեցին, որի հետեւանքով վարժարանը վերածուեց ծաղկոցի: Զոհրապը որոշ ժամանակ սովորել է նաեւ Օրթագիւղի «Լուսաւորչութեան» կաթոլիկ վարժարանում, որի տնօրէնը Յովսէփ Շիշմանեանն էր (Մերենց 1822-1888): Այնուհետեւ ուսումը շարունակել է Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանում¹⁷, որն ավարտել է 1876 թուականին: Նոյն տարում ընդունուել է Կալաթասարայի Հաղորդակցութեան ճանապարհների եւ քաղաքային շինութեան ինստիտուտը¹⁸, որն ավարտել է 1879ին՝ ստանալով երկրաչափ-ճարտարապետի մասնագիտութիւն: Այդ մասին Զոհրապն անթաքնոյց հպարտութեամբ գրում է. «Տասնութ տարեկան հասակից առաջինը եղած եմ երկրաչափական վարժարանէն չափագիտական ամենաբարձր ուսումներու շրջանները ավարտելով այնպիսի տարիքի մը, երբ ուրիշները մօր կը սկսին»¹⁹: Սակայն այս մասնագիտութեամբ աշխատանք չգտնելու պատճառով Զոհրապը ծառայութեան է անցնում Աւետիս Եօրտամեանի փաստաբանական դրասենեակում եւ նրա խորհրդով էլ 1880 թուականին ըն-

16 ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, Ա., ամր, 19:

17 Աշխատանքի բերումով Ա. Եօրտամեանը թողել է Օրթագիւղը եւ ընտանիքով տեղափոխուել է Պէշիկթաշ:

18 Կալաթասարայի Կայսերական ճեմարանը (լիցեյ) բացուել է 1868ին: Լուսաւորչութեան մախարարի հրամանով 1874ին բացուել են իրաւաբանական, գրական եւ հաղորդակցութեան ճամապարհների բաժնիները, որոնք գործել են որպէս առանձին ուսումնական հաստատութիւններ: Հաղորդակցութեան ճամապարհների եւ քաղաքաշինութեան բաժնում ուսուցումը եռամեայ էր: Դասաւանդուել են հետեւեալ առարկաները՝ բարձրագոյն մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, մեխանիկա, մեքենագիտութիւն, նիւթերի դիմադրութիւն, երկրաբանութիւն, երկրաչափութիւն, շինարարական գործ եւ մետաղագործութիւն:

19 Ժամանակ, Կ. Պոլիս 1908, 24/6 հոկտեմբեր, թիւ 9:

դուռնուում է Կալաթասարայի իրաւագիտական վարժարանը²⁰: 1881ի սեպտեմբերին Թուրքիայի դատական նախարարութիւնը փակում է Կալաթասարայի իրաւագիտական վարժարանը՝ փոխարէնը բացելով Թուրքականը՝ Հուգուգ մեքթեբէն: Թէպէտ ըստ կանոնադրի ազդարարւում էր, որ այնտեղ կարող էին սովորել կայսրութեան բոլոր հպատակները, սակայն իրականում վարժարանի հիմնական նպատակը մուսուլման մասնագէտներ պատրաստելն էր: Ուսուցումը իրականացւում էր օսմաներենով, դիմորդները պարտադիր քննութիւն են յանձնել օսմաներէնից, օսմանեան եւ ընդհանուր պատմութիւնից, աշխարհագրութիւնից ու թուաբանութիւնից: Կառավարութիւնը պաշտօնապէս ծանուցում էր, որ «Նիգամիէ (Ֆաղաֆայիմ՝ Շ. Ո.) դատարանաց առջեւ» փաստաբանի պաշտօն կարող են կատարել միայն «տէրութեան իրաւագիտական վարժարանի» վկայական ունենալու դէպքում²¹: Զոհրապը նոյն թուականի նոյեմբերին ստիպուած տեղափոխուել է Հուգուգ մեքթեբէ: Սակայն, երբ 1882 թուականին վարժարանի տնօրինութեան որոշմամբ ուսումնառութեան եռամեայ շրջանը վերածուեց քառամեայի, նա մի խումբ ուսանողների հետ հեռացաւ վարժարանից: Օգտուելով դատական նախարարութեան՝ փաստաբանութեամբ զբաղուողներին քննութիւն յանձնելու թոյլտուութիւն տալու արտօնութիւնից՝ համապատասխան վկայական ստանալու համար, 1884ի յունուարին մեկնում է Էդիրն (Ադրիանապոլիս), փայլուն քննութիւններ է յանձնում կուսակալութեան քննիչ յանձնաժողովին, ստանում է «առաջին կարգի փաստաբանի» վկայական եւ վերադառնում է Կ. Պոլիս:

Տարիների ընթացքում Զոհրապը ընդլայնել է իր փաստաբանական գործունէութեան շրջանակները: Դատեր է վարել ինչպէս եղեռնադատ, այնպէս էլ քաղաքային, առեւտրական, վճարեկ, վերաքննիչ եւ այլ ատեաններում: Տեղին է մատնանշել, որ

20 Իրաւագիտական վարժարանը պաշտօնապէս գտնուել է սուլթանի հովանաւորութեան ներքոյ: Շրջանաւարտներին արտօնում էր ստանալ դատաւորի, դատախազի եւ այլ պաշտօններ: Վարժարանում դասաւանդել են Ֆրանսիայի ցանաչուած մասնագէտներ՝ Օլիսը (հռոմէական իրաւունք), գառն (իրաւագիտութիւն, փիլիսոփայութիւն) եւ ուրիշներ: Իւրաքանչիւր եռամսեակը մէկ ուսանողները բնութիւն են յանձնել: Մասնագիտական առակամների դրուածքը վարժարանում բարձր մակարդակ է ունեցել (Մասիս, Կ. Պոլիս 1881, հոկտեմբեր 14/26, թիւ 3016):

21 Մասիս, Կ. Պոլիս 1881, հոկտեմբեր 14/16:

չունենորներին ու պանդուխտներին օգնել է ճրիարար՝ յաճախ իր սեփական միջոցներով վճարելով նաեւ նրանց դատական ծախսերը:

Փաստաբանական եւ իրաւաբանական գործունէութիւնը մեծ հռչակ է բերել Զոհրապին: Փաստաբանական հմտութիւնն ու կարողութիւնը, ճարտասանական բացառիկ տաղանդն ու երկաթեայ տրամաբանութիւնը, հաւասարակշռուած ու սառը դատողութիւնը այն հզօր զէնքերն էին, որոնց շնորհիւ նա շահեց մեծ թուով դատեր, առանց ազգային խտրականութեան պաշտպանեց ու փրկեց մահապատժի դատապարտուած բազմաթիւ ճակատագրեր:

Իրաւագիտական առաջին աշխատութիւնը Զոհրապը հրատարակեց 1883ին: Աւելի ուշ նա հրատարակեց եւս երկու աշխատութիւն, դրանցից մէկը Ֆրանսերէնով տպագրուեց Փարիզում: Այս աշխատութիւններում շարադրուած են նրա փաստաբանական եւ իրաւագիտական հայեացքները: Գրիգոր Զոհրապը զարգացրեց օրէնսգիտական առաջադիմական գաղափարներ՝ հակադրուելով օսմանական միապետական քարացած օրէնքներին, պաշտպանեց ժողովրդի իրաւունքներն ու շահերը:

Տակաւին պատանի տարիքում ուսումնառութեան հետ մէկտեղ նա զբաղուել է նաեւ հասարակական գործունէութեամբ՝ անդամակցելով «Ասիական ընկերութեանը», որը հիմնադրուել էր 1877 թուականին Կ. Պոլսի Խասգիւղ թաղում: Ընկերութեան նպատակը «Հայաստանի վարժարանաց ձրի գրեանք մատակարարելն էր»: Ընկերութեան յանձնարարութեամբ 1880ի փետրուարին Զոհրապը այցելում է Խասգիւղի ազգային վարժարան, ծանօթանում է վարժարանի ներքին կեանքին եւ կրթութեան դրուածքին: Այդ կապակցութեամբ նա «Մասիս»ում հանդէս է եկել յօդուածով, որտեղ ամենայն մանրամասնութեամբ ներկայացրել է վարժարանից ստացած իր տպաւորութիւնները²²: Նոյն թուականին նա ընտրուել է «Միացեալ»ի կեդրոնական ժողովի անդամ²³:

22 Մասիս, Կ. Պոլիս 1880, մարտ, 4/16, թիւ 2564:

23 «Միացեալ»ը ստեղծուել է Արարատեան, Դպրոցասիրաց-Արեւելեան եւ Կիլիկեան ընկերութիւնների միաւորմամբ՝ Ապատակ ունենալով Հայաստանի գաւառներում եւ Կիլիկիայում կրթութեան գործը ծաւալել: Ընկերութիւնը հիմնել է մասնագիտեր, գաւառներում բացել է դպրոցներ, հրատարակել է դասագրքեր, հայթայթել գրեմական պիտոյքներ, պատրաստել ուսուցիչներ եւ այլն:

Յատկապէս մեծ է եղել Զոհրապի դերը «Միացեալ»ի կրթական ու դադափարական աշխատանքների կազմակերպման գործում: Այդ մասին նա սիրով արձանագրել է. «Ընկերութեան ուսուցչական մարմնին յեղափոխական շարժման մասնակցելու ուղղութիւնը ես ճշդած ու քաջալերած եմ, եթէ ոչ մտցուցած»²⁴:

1881ի յուլիսին նա ընտրուել է ընկերութեան վարչութեան անդամ եւ ատենադպիր, կազմել եւ Ազգային ժողովի վաւերացմանն է ներկայացրել նոր կանոնագիր, ըստ որի ընկերութիւնը այսուհետ պէտք է դառնար ոչ թէ սոսկ դասագրքեր հայթայթող միատարր կազմակերպութիւն, այլ պէտք է հրատարակեր «ազգային կրթութեան կարեւոր սեպուած դասագրքերը, յորոց օրիապէս պիտի տայ Միացեալ, ինչպէս եւ մեր ուրիշ ընկերութեանց Հայաստանիդ պրոցաց»²⁵:

Դեռեւս 1882ի մայիսին Զոհրապի նախաձեռնութեամբ որոշուել էր «Ասիական ընկերութեան» ֆանքերով հրատարակել գիտական եւ գրական հանդէս: Մեծ խնամքով կազմուել է հանդէսի տեղեկագիրն ու կանոնագիրը: Ազգային իշխանութիւնները հաւանութիւն են տուել այդ ծրագրին եւ արտօնուել է «Երկրագունտ» հանդէսի հրատարակութիւնը: 1883ի յունուարին Յակոբ Պարոնեանի (1843-1890) խմբագրութեամբ Կ. Պոլսում հրատարակուեց «Երկրագունտ»ը: Այդ մասին խմբագրութիւնը ծանուցում է. «Մեծապատիւ Գրիգոր Էֆենտի Զոհրապ քանի տարիներ Պետ եղած է Ասիական ընկերութեան Տնօրէն ժողովոյն եւ գլխաւոր հիմնադիրն եղած է Երկրագունտ հանդէսին»²⁶: Գր. Զոհրապը ոչ միայն եռանդուն թղթակցում էր հանդէսին, այլեւ գործնական մասնակցութիւն ունէր նիւթերի հաւաքման, ընտրութեան եւ խմբագրման աշխատանքներին:

1884ի յունուարից «Երկրագունտ»ը խմբագրել է Եղիա Տեմիրճիպաշեանը (1851-1908): Այդ մասին Տեմիրճիպաշեանը գրում է, որ ինքը՝ «հրատարակիչ ընկերութեան տնօրէն Գրիգոր Զոհրապի հրաւիրմանց վրայ է ստանձնել հանդէսի խմբագրապետութիւնը»²⁷: 1885ի յուլիսից Զոհրապը դադարում է աշխատակցել հանդէսին: Պատճառը հետեւեալն էր: Նա տպագրութեան էր յանձնել

24 Մասիս, Կ. Պոլիս 1880, մայիս, 19/31, թիւ 24, թիւ 2625, նաեւ՝ Ժամանակ, Կ. Պոլիս 1908, հոկտեմբեր 24/6, թիւ 9:

25 Մասիս, Կ. Պոլիս 1881, 17/29, թիւ 2944:

26 Երկրագունտ, Կ. Պոլիս 1888, փետրուար, թիւ 52:

27 Բիւզանդիոն, Կ. Պոլիս 1899, յունուար, 12/21, թիւ 680:

«Անհետացած սերունդ մը» վէպի առաջին հատուածները: Տեմիր-ճիպաշեանը առանց հեղինակի իմացութեան, կատարել էր մասնակի սրբագրումներ: Սոյն վէպը անուանի բանաստեղծն ընկալել էր որպէս զուտ նատուրալիստական եւ իր հայեցողութեամբ փորձել էր կանխել «մեր ազգին համար այդ վաղածամ» երեւոյթը: Զոհրապը նկատելով այդ միջամտութիւնը՝ դադարեցրել էր տպագրութիւնը եւ պահանջել էր, որպէսզի խմբագիրն այդ մասին բացատրութիւն տար ընթերցողին: Հանդէսի յուլիսեան համարներից մէկում Ե. Տեմիրճիպաշեանը գրում է. «Զոհրապի յատուկ խնդրանաց վրայ յայտնում եմ, որ պաշտօնիս պահանջմամբ եւ խղիւս հակառակ մեղմացուցի Երկրագունտի մէջ իւր վէպին ինչ-ինչ բառերն ու պարբերութիւններն...»: Այդ միջադէպից յետոյ Զոհրապը թէպէտ ներքուստ վիրաւորուած էր Տեմիրճիպաշեանից, սակայն մինչեւ վերջ շարունակեց պահպանել նրա հետ ջերմ յարաբերութիւնները:

1887ի յունիսին «Անհետացած սերունդ մը» վէպը լոյս է տեսել առանձին գրքով: Հ. Ասատուրը «Մասիս»ում հանդէս է եկել «Արդի հայ գրականութիւնն ի Թուրքիա» յօդուածով, որտեղ բարձր գնահատելով Զոհրապի գրական գործունէութիւնն ընդհանրապէս, վէպը համարել է «... հետաքրքրական, որ իւր աշխոյժ եւ կորովի ռեալ կը պատկերէ ժամանակակից իրողութիւններու դէպքեր»²⁸: Նա Զոհրապին բնութագրել է որպէս երկաթի նկարագիր, խիզախ եւ անվեհեր գրող, որը փառաւոր յայտնագործութիւն էր հայ գրականութեան համար: Նրա վէպերում ամբողջովին արտայայտուած է իրականի զգացումը «ինքնատիպ ոմ, համակ զօրութիւն եւ կորով»: «Մասիս»ում տպագրուել է նաեւ Լեւոն Բաշալեանի (1868-1943) գրախօսութիւնը սոյն գրքի մասին, որտեղ մասնաւորապէս մատնանշուած է, որ «Ի վաղուց հետեւ հրատարակուած չէր գիրք մը այսքան նոր ու այսքան գրական... գրքին մէկ ծայրէն միւս ծայրն հեղինակը կ'երեւայ մեզ առաջնակարգ վարպետ մը, որ կը ներկայացնէ մեզ կեանքն իւր մանրակրկիտ ճշտութեամբ եւ ամէն երեւոյթներու ներքեւ»²⁹: Գրախօսը վէպը համարել է նոր գրականութեան «առաջնակարգ» եւ «փայլուն» սկզբնաւորութիւն:

1891ի դեկտեմբերին Զոհրապը Հրանտ Ասատուրի եւ Տիգրան Կամսարականի (1866-1941) հետ որոշում են ստեղծել խմբ-

28 Մասիս, 1887, մայիս 9, թիւ 3872:

29 Անդ, թիւ 3877:

բազրական մարմին եւ «Մասիս»ը հրատարակել որպէս գրական հանդէս: Հանդէսը պէտք է խմբագրուէր՝ կապ չունենալով «Արեւելք»ի հետ, որպէս զի վերջինիս վարչական խորհուրդը չմիջամտէր նրա ուղղութեանը: Խմբագրութեան կողմից «Հայրենիք»-ում տպագրուած ծանուցման մէջ մատնանշուում էր. «Մասիս» խմբագիրք, որք արդէն ազգին ծանօթ են, Հայրենիքի աշխատակիցներն ու գաղափարակիցներն են: Հետեւաբար վստահ ենք թէ իրենց հրապարակած հանդէսը յառաջադիմութեան հանդէս մը պիտի ըլլայ, պայմանաւ, որ Արեւելքի վարչութիւնը, որուն սեփականութիւնն է, Մասիսը, չխեղդէ այդ խմբագրութեան ազնիւ ձգտումները եւ չկաշկանդէ անոնց անկեղծ ու յառաջադիմութեան ոգին»: Որպէս հրատարակիչ տնօրէն Հր. Ասատուրի վրայ գրուած էին յօդուածներն ընտրելու, հաւաքելու եւ սրբագրելու պարտականութիւնները: Բացի կազմակերպչական աշխատանքներից Զոհրապը ստանձնել էր նաեւ հանդէսի գաղափարական ու գեղարուեստական բաժնի պատասխանատուութիւնը: Ա. Զոպանեանը իր յուշերում գրում է. «Այդ միջոցին գրաքննութիւնը արգիլած էր ոտանաւոր գրութեան հրատարակումը, որովհետեւ լրտեսներ այնպէս հասկցուցած էին Սուլթանին, թէ ոտանաւորով կարելի է աւելի դիւրաւ վտանգաւոր գաղափարներ խորհրդաւոր ձեւով մը արտայայտել...»: Միայն Զոհրապի յամառ ջանքերի շնորհիւ էր, որ ինչպէս «Մասիս»ը, այնպէս էլ հայկական միւս պարբերականները վերստին ստացան ոտանաւորներ տպագրելու արտօնութիւն:

Յանձնիս Զոհրապի՝ հանդէսի շուրջ համախմբուեց պոլսահայ գրականութեան ընտրանին: «Մասիս»ում կատարած մի շարք գրառումներում Զոհրապը փորձել է զարկ տալ թատերական ժանրին: Այդ նպատակով նա տպագրում է «Թատրոն» յօդուածը, որտեղ հիմնաւորում է այն գաղափարը, որ «Թատրոնի քառյայացուցիչ հանգամանքին քարձրութիւնը ոչ մէկ արուեստ կրնայ հաւասարիլ: Բուն իսկ կեանքն է ան. ապրուածը, իրականը եւ ոչ թէ գրուած, երգուած կամ նկարուած կեանքը»³⁰:

ԺԹ. դարի 90ականների մշակութային կեանքի կարեւոր իրադարձութիւններից մէկը Գատըգիւղում 1892-1894 թթ. Վահան Մալեգեանի (1871-1967) սալոնում կազմակերպուած գրական երեկոյթներն էին, որոնց իրենց փառահեղ ներկայութեամբ շունչ եւ գեղեցկութիւն են հաղորդել մշակութային կեանքի «ոս-

• 30 Մասիս, Կ. Պոլիս 1892, դեկտեմբեր 31, թիւ 3972, 270-271:

կե շրջանի»³¹ մտաւորականների մի շքեղ ծաղկաբոյլ՝ Գրիգոր Զոհրապ, Տիգրան Կամսարական, Լեւոն Բաշալեան, Տիրան Քելեկեան (1862-1915), Եղիա Տեմիրճիպաշեան, Յովհաննէս Սէթեան (1853-1930), Զապէլ Ասատուր (Սիպիլ 1863-1934), Յարութիւն Ալփիար (1864-1919), Ալեքսանդր Փանոսեան (1859-1919), Արշակ Զոպանեան, Երուանդ Օտեան (1869-1920) եւ ուրիշներ:

Ա. Զոպանեանը «Անցած օրեր...»-ի առաջաբանում իրեն յատուկ պերճախօսութեամբ գրում է. «Վահան Մալեգեան, որ սիրուն գաղափարը յղացեր է տարիներ առաջ իր ընտանեկան յարկին տակ տեղի ունեցած գրական երեկոյթներու յիշատակը պահպանող հին տօգումած թղթերու ծրարը հատորիկի մը մէջ ամփոփելու կ'ուզէ որ յառաջաբան մը գրեմ այդ հաւաքածուին համար: Վաղեմի քարեկամիս փափաքը ամենասրտագին ու փութկոտ հանդիման կը կատարեմ, որովհետեւ անցեալի վարդերու եւ մեխակներու այդ չորցած թերթերու փունջը իմ ալ պատանութեանս է'ն աղուոր օրերէն մէկ քանիսն կ'ոգեկոչէ, ու երախտագիտութեան գործագին զգացումի մը՝ որ այդ օրերէն ի վեր սրտիս մէջ կենդանի մնացած է միշտ՝ հրապարակային արտայայտութիւն մը տալու քաղցրաոյթ մըն է որ կ'ընծայուի՝ ինծի առով: Անճակաւ տեսակէտէն դուրս, քանաստեղծական ժամանցներու, գրական խաղերու այդ նշխարները, ու պատկերը այն միջավայրին ուր երկնուած են անոնք, Պոլսահայ համայնքին ոչ միայն գրական շարժման, այլեւ կենցաղավարական զարգացման մէկ որոշ ու թանկագին շրջանը կը ներկայացնեն, որ մեր ցեղին դարաւոր գոյութեան ամենէն գեղեցիկ ու քեղմնաւոր բուսկներէն մին է եղած, ու մտքով վերադառնալ այդ բուսկին, այդ օրերուն յուշերը քրքրել. Այդ շրջանին գլխաւոր փայլը կազմող ներուժ կամ շնորհ ալ ի դեմքերուն – որ մեծ մասամբ անհետացած են –

31 Պոլսահայ համայնքն ունեցել է երկու «ռսկեշրջան»՝ մէկը ԺԹ. դարի 60-70ական թուականներն էին, երբ ապրել ու գործել են Մկրտիչ Պէշիկ-թաշեանը, Գրիգոր Օտեանը, Նահապետ Ռուսինեանը, Յովսէփ Շիշմանեանը եւ այլ տաղանդաւոր արուեստագետներ, ազգային եւ մշակութային գործիչներ: Միւսը նոյն դարաշրջանի 80-90ական թուականներն էին, երբ Յակոբ Պարոնեանը, Եղիա Տեմիրճիպաշեանը, Հրամտ եւ Զապէլ Ասատուրները, Գրիգոր Զոհրապը եւ շատ ուրիշներ ստեղծեցին իրենց լուսագոյն ստեղծագործութիւնները, երբ սկիզբ առաւ քարեկոտնազման մի փայլուն շրջան յանձինս Մուրադ Ռաֆայէլեան, Պերպէրեան, Ազգային կեդրոնական վարժաններից դուրս եկող գրողների ու մշակութային գործիչների՝ «Արեւելք-Մասիս-Հայրենիք» գրական շարժման համագործակցութեամբ:

խանդավառագին յարգանքի ողջոյն մը ուղղել, աւելի եւս քաղցր ու նուիրական պարտականութեան մը կատարումն է»³²:

1893ի յունուարից Գր. Զոհրապի խմբագրութեամբ «Մասիս»-ը հրատարակուեց որպէս շաբաթաթերթ: Խմբագրական աշխատանքում Զոհրապին օգնել է Տիգրան Արփիարեանը: Զոհրապի խնդրանքով շաբաթաթերթին աշխատակցել են Եղիա Տէմիրճիպաշեանը եւ Կարապետ Իւթիւճեանը (1823-1904):

Տէմիրճիպաշեանը «Մասիս»-ում տպագրեց իր «Վերլուծում» յօդուածը: Տիգրան Արփիարեանը հանդէս եկաւ «Յիսուն տարի ետք. Անջատ յուշեր» յօդուածով, որտեղ անդրադառնալով Զոհրապի հրապարակախօսական գործունէութեանը մատնանշում է, որ նրա «Մասիս»-ները «գրական նրբաճաշակ ու խնամեալ հատորներ կը կազմեն ուշատ մը գիրքերէ աւելի յարգ ունեւորիչէ այսօր հայ մատենադարաններուն մէջ»³³: Նոյն թերթում ենովք Արմէնը (1882-1968) տպագրեց «Նորավէպներ»-ը յօդուածը, որտեղ զարգացրեց այն միտքը, որ թէեւ նորավէպեր շատ են գրուել ու թարգմանուել, սակայն միայն «Զոհրապ իր քանի մը նոյն ըմբռնումով վառուած քեթիկունքովը պիտի հիմներ ճշմարիտ նորավէպի դպրոցը. materialiste-ներուն բովանդակ հուժկու կարողութեամբ»³⁴:

1894ի օգոստոսին տեղի ունեցաւ Սասունի հերոսամարտը: 1895ի մայիսի 11ին Կ. Պոլսում Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի ղեկավարները Բարձր դռանն են յանձնում Հայկական բարենորոգումների ծրագիրը: Նոյն թուականի սեպտեմբերի 20ին Կ. Պոլսում Հնչակեանները կազմակերպեցին Պապը Ալիի ցոյցը՝ պահանջելով իրագործել մայիսեան բարենորոգումների ծրագիրը: Հոկտեմբերի 5ից նոյեմբերի 1ը կազմակերպուեցին հայերի զանգուածային ջարդեր Արեւմտեան Հայաստանի գաւառներում³⁵: Նոյն թուականի հոկտեմբերի 12ին բռնկուեց Զէյթունի ապստամբութիւնը³⁶: Տարեվերջին Կ. Պոլսում սկսուում են հայերի մասսայական-քաղաքական ձերբակալութիւնները: 1896ի յունիսին սկիզբ առան Վանի ինքնապաշտպանական մարտերը

32 ՄԱԼԷՋԵԱՆ, Վ., «Անցած օրեր. Յուշամատեն Գատըֆէյի գրական երեկոյքներու (1892-1894)», տպ. գեղարուեստական հայ տպարան, Բարիկ 1927, 9-10:

33 Մասիս, 1902, թիւ 6, 82-83:

34 Անդ, 1901, թիւ 22, 337-340:

35 Անդ, 968:

36 Անդ, 250-261:

Թուրքական կանոնաւոր զօրախմբերի դէմ: Հայ ժողովրդի պատմութեան մէջ 1894-1896 թուականները մղձաւանջային ծանր տարիներ էին: Բերենք այդ օրերին Կ. Պոլսից յղուած նամակից մի քաղուածք. «Այս օրերս անթիւ ձերբակալութիւններ կ'ըլլան, մանաւանդ գաւառացիներէն: Մարդ մը որ փողոցին մէջ կ'երթայ, բաւական է, որ ոստիկան մը անոր հայ ըլլալը հասկնայ եւ ընդհանրապէս առանց ուրիշ պատճառի կը ձերբակալեն. Հարցաքննութիւն կամ մանրամասն խուզարկութիւններ չկան. միայն մարդու անուն եւ ուր տեղացի ըլլալը հասկնալէ վերջ կ'աքորեն. բայց սատանան միայն գիտէ թէ ուր. շատերը ծովին յատակը կ'իջնեն. ցամաք ելլողներն ալ անօթութենէ կամ տանջանքներ կը մեռնին...»³⁷:

1896ի օգոստոսի 14ին տեղի ունեցաւ Բանկ Օթոմանիի գրաւումը, որը պատճառ դարձաւ, որպէսզի Թուրք ջարդարարները կազմակերպէին հայերի սպանդը Կ. Պոլսում:

Հայ քաղաքական ամբաստանեալներին դատելու համար սուլթան Համիդի հրամանով ստեղծուեց «Արտասովոր ատեան» (Մահքեմեի Ֆենքելատէ), որի արձակած վճիռները ենթակայ չէին բեկանման ու վաւերացման: Ատեանը բաղկացած էր վեց Թուրք եւ չորս հայ դատաւորներից: Թէպէտ Օսմանեան օրէնսդրութեամբ վճիռները կայացուած էին ձայների երկու երրորդով, սակայն ատեանին արտօնուել էր որոշումներն ընդունել պարզ մեծամասնութեամբ³⁸: «Արտասովոր ատեանը» հայ բանտարկեալներին պաշտպանելու համար ընրտել էր 10 փաստաբան, որոնց մէջ էր նաեւ Գրիգոր Զոհրապը: Լեւոն Լարենցի (Քիրիշեան 1882-1925) վկայութեամբ՝ «Հայ փաստաբաններուն ամենէն ինքայնաբեր Զոհրապ, 1894-96-ի դատավարութեան ժամանակ, երբ հայ քաղաքական ամբաստանեալներուն պաշտպանութիւնը ստանձնած էր, քանի որ անոր անգամներ նախագահական ազդարարութեան եւ մինչեւ իսկ անհատաբար թուրքերէ սպառնալիքներ ընդունեց»³⁹, սակայն դա չխանգարեց, որպէսզի Արտասովոր ատեանում պանդուխտ հայերի հետ խիզախաբար պաշտպանէր նաեւ բանտում յայտնուած բազմաթիւ հայ մտաւորականների դատը եւ կարողանար մահուան վճիռը փոխարինել բանտարկութեամբ: Այդ մասին Գր. Զոհրապի բազում գրառումներից բերենք մէկը՝ «Պատմանեան

37 Դրօշակ, 1895, դեկտեմբեր 25, թիւ 22,8:

38 Բիւզանդիզմ, Կ. Պոլիս 1913, օգոստոս 29/11, թիւ 5107:

39 Արմենիա, 1896, հոկտեմբեր 9/21, թիւ 24, նաեւ՝ Ազատ քեմ 1905, դեկտեմբեր 5, թիւ 35:

(Կարապետ Բասմանեան. 1864-1942) կը յիշեցնէ ինծի, որ ատենով պաշտպանեցի զինքը Պոլսոյ Եղեռնադատ ատեանին առջեւ եւ կը կարծէ որ յաջողեցայ մահուան պատիժը, որ կը ծանրանար իր վրայ, իջեցնել երեւ տարուան բանտարկութեան»⁴⁰:

Գր. Զոհրապի կեանքի եւ գործունէութեան գերակշիռ մասն անցել է սուլթան Համիդի բռնատիրական խստակարգի պայմաններում, երբ Թուրքիան եւ նրա տիրապետութեան տակ ապրող ազգութիւնները պարտադրուած ապրում էին քաղաքական, տնտեսական, իրաւական եւ մշակութային անասելի ծանր պայմաններում: Երբ 1878 թուականին Բեռլինի վեհաժողովից յետոյ յստակ դրուեց հայերին ֆիզիկապէս ոչնչացնելու եւ «Հայաստանն առանց հայերի» համիդեան ծրագրի իրագործման խընդիւրը, բացառիկ ուժ, կամք ու կորով էր պէտք ոչ միայն պայքարելու, այլ նաեւ ստեղծագործելու համար: Զոհրապն այն բացառիկներից մէկն էր, ով պայքարեց հնարաւոր եւ անհնար բոլոր միջոցներով՝ ստեղծագործութեամբ ու հրապարակախօսութեամբ, դատական տարբեր ատեաններում եւ պառլամենտում (պետական ու ազգային), գաղտնի եւ բացայայտ իր անձնական կապերն ու յարաբերութիւններն օգտագործելու միջոցներով: Իր հրապարակային ճառերից մէկում՝ քննադատելով համիդեան վարչակարգի ջարդի քաղաքականութիւնը շեշտադրում է, որ այդօրինակ քաղաքականութիւնը բնորոշ է թոյլ եւ յետամնաց պետութիւններին, սակայն անհրաժեշտ է գիտակցել, որ՝ «հալածանքներուն ամենէն աղետաւորները ջարդերը չեն, այլ անոնք, որոնք կ'ուղղուին մտքի եւ սրտի դէմ: Եւ այդ տեսակի էին 16րդ յօդուածին հաստատումէն անմիջապէս յետոյ հայոց դէմ սկսած հալածանքները»:

Ահա «մտքի ու սրտի» բիրտ հալածանքների դէմ առաջինը պայքարի դրօշ պարզեցին Զոհրապն ու նրա սերնդակիցները, այդ պայքարը դարձնելով նաեւ 80ականների գրական ու մշակութային ստեղծագործութիւնների հիմնական բովանդակութիւնը, որը բացորոշեց այդ շրջանի գրականութեան առանձնայատկութիւններից մէկը: Այս տեսակէտից բնութագրական է «Մասիս»ում (թիւ 47) տպագրուած «Վերջին Արեւագալը» գեղարուեստական արձակը, որտեղ կոտորածներից յետոյ Զոհրապն առաջինը եւ առաջին անգամ գործածեց նահատակ բառը: «96ի ջարդէն անմիջապէս ետքը, գրում է նա, գրած յօդուածներս ունէ

հրապարակագրի համար ներելի յանդգնութեամբ ամեն սահմանները կանցնէին. ես էի որ այդ յօդուածներուն մէջ խողխողուած հայերը կրցայ կռչել նահատակ»⁴¹:

Բռնութեան, անարդարութեան եւ մարդու իրաւունքների ոտնահարման դէմ Զոհրապեան պայքարն ու ընդվզումները չէին սահմանափակուած միայն ազգային շրջանակներում: Նա քաջութեամբ պայքարել է նաեւ միջազգային բռնութիւնների, մարդկանց իրաւունքների ոտնահարման, ազգային խտրականութեան, էթնիկ անհանդուրժողականութեան ու ռասիզմի դէմ: Այս առումով յատկապէս նշանակալից է Ֆրանսիական բանակի հրեայ սպայ Ալֆրեդ Դրեյֆուսի (1859-1935) յայտնի դատաւարութեան ընթացքում նրա գրած ընդարձակ եւ հիմնաւոր պաշտպանողականը յօդուտ նրա: Պաշտպանողականը Զոհրապն անձամբ ուղարկել է Փարիզ՝ հրէական սինդիկատի նախագահ Հանրի Ռենաքին՝ 1899ի յունուարին, իսկ ապրիլին ստացել է հրէական սինդիկատի շնորհակալագիրը եւ Դրեյֆուսի մանրանկարով ոսկէ կոճակ, որը նրան է յանձնել Պոլսի հրէական համայնքի պատուիրակութիւնը⁴²:

Զարեհ Եոսուֆեանի (1863-1940) առաջարկով 1893ի յունուարին Զոհրապը հրատարակեց «Մասիս» օրաթերթը⁴³ Սիպիլի եւ Ասատուրի խմբագրութեամբ: «Մասիս»ի առաւելութիւններից մէկն այն էր, որ յանձինս Զոհրապի նրա շուրջ համախմբուեցին այդ շրջանի անուանի մտաւորականները, գրական եւ հրապարակախօսական մտքի ամենանշանաւոր գործիչները: Այդ շարքում յիշատակութեան է արժանի Յարութիւն Մրմրեանը (1860-1926) «Արմաշ», «Միսաքեանիկեմսագրութիւն», «Տֆնութիւն», «Ժպիտֆ» եւ այլ հրաշակերտ ստեղծագործութիւնների տաղանդաւոր հեղինակը, ում քանդակած պարբերութիւնները «որոնց ցցուածքը ու կարկառները, նիւթը կամ գաղափարը իսկոյն կը յօրինեն կը պատկերացնեն աչքիդ առջեւ. ոսկեգօծ արձակ մը, ոչ կեղծ ու խարդախ փայլով, այլ գուտ ու հարազատ ոսկիի շողիւնով»⁴⁴: Օրաթերթին թղթակցում էր Զարեհ Եոսուֆեանը, որը խմբագրում էր Առեւտրական տան կողմից հրատարակուող «Առեւտրական» թերթի ֆրանսիական բաժինը: Միաժամանակ հանդէս էր գալիս

41 Ժամանակ, Կ. Պոլիս, 1908, հոկտեմբեր 24/7, թիւ 9:

42 Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1899, մայիս 15/27, թիւ 785:

43 Արեւելքի փակումից յետոյ Զ. Եոսուֆեանը Մասիսը հրատարակել է որպէս օրաթերթ:

44 ԱՍՍՏՈՒՐ, Հ., Դիմաստուերներ, Կ. Պոլիս 1921, 235:

զգայուն, մեղամաղձոտ եւ բանաստեղծական շնչով յագեցած չափածոյ ստեղծագործութիւններով:

«Մասիս»ի գլխաւոր աշխատակիցներից էր Հանրայայտ բընագէտ, մաթեմատիկոս Յովսէփ Եոսուֆեանը (1857-1913), ով «Արա» ծածկանունով հրապարակում էր «սրամտութեամբ եւ հիմնութեամբ գրուած» գիտական քրոնիկներ: Իր նշանաւոր «Ծանօթ դէմքեր»ի մէջ Յ. Եոսուֆեանի դիմանկարը կերտելիս Զոհրապը գրում է. «Յովսէփ Եոսուֆեան այն գիտուններէն չէ որ հին ատենի մոգերուն պէս իրենց ստրկածները կը ծածկեն պարզ մահկանացուներէն: Ընդհակառակը, իր ջանքը եղած է գիտական յօդուածներով ... գիտութիւնը ռամկացնել, հասկնալի ու մատչելի, նոյնիսկ հրապուրիչ ընծայել ամէն անոնց՝ որոնք կը կարծեն թէ չոր ու ցամաք անապատ մըն է ան:

... Իրմէ առաջնորդուած եւ իրեն ունկնդրելով, կը հետեւինք մամբուն որ գիտութեան համար իրմէ աւելի արժանաւոր մը չէր կրնար բանալ մեր գրականութեան մէջ»⁴⁵: «Պզտիկ տոմսեր» խորագրի տակ «Նետ» ծածկանունով «Մասիս»ին թղթակցում էր նաեւ արձակագիր Տիգրան Կամսարականը, որը 1896ի ջարդերից յետոյ բնակութիւն էր հաստատել Եգիպտոսում:

«Մասիս»ի մշտական թղթակիցներից էր յայտնի գրաբարագէտ, մանկավարժ, խմբագիր Յակոբ Գուրգէնը (Պիպեռճեան.- 1850-1915), որը հանդէս էր գալիս Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին վերաբերող անտիպ տեղեկատուութիւններով ու զուարճալի պատմութիւններով համեմուած շաբաթական քրոնիկներով: Զոհրապը բարձր գնահատելով Գուրգէնի հայկաբանութեան եւ հայագիտութեան մէջ ունեցած ծառայութիւնները եւ գրաբարի անթերի իմացութիւնը, որն իր մէջ ընդելուզում էր Եզնիկ Կողբացու դարերի հեռուներից եկող ոսկեղէնիկ լեզուի հարստութիւնն ու ճոխութիւնը գրում էր. «Զէ՞ մի որ ամէնքին գրաբարը ուսած ենք մալս. եւ Գուրգէն իր առաջին սիրոյն հաւատարիմ մնացողի արժանիքը ունի գոնէ. յետադէմ մ'է, առանց կեղծիքի գէթ, ազատ համարձակ յետադէմ մը, որ կոնակը մեզի դարձուցած կը քալէ իր նպատակին. դէպի հինգերորդ դարը, եւ այս կերպով կը տարբերի անոնցմէ, որք՝ որ կողմ երթալնուն անգէտ, յառաջ քալելու ձեւեր կ'ընեն, ռոտերնին կը շարժեն առանց տեղեքնուն երերալու, երազի մը մէջ եղածի պէս...»⁴⁶:

45 ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ, ԵԺ, հտ. 1, է., 1962, 437-438:

46 Անդ, 412:

Մատթէոս Մամուրեանը (1831-1901) խստապահանջ այդ գրաքննադատը, ով ընտրողականութեան խիստ սկզբունքով է գնահատել ինչպէս անցեալի, այնպէս էլ իր ժամանակի գրական ու լրագրական գործի երախտաւորներին, Զոհրապին համարել է «ազգային դիրք եւ տաղանդաւոր ու բանիրուն իրաւաբանի մը անուն ունեցող» անձնաւորութիւն: Անդրադառնալով օրաթերթին խոստովանում է, որ «Մասիս»ի ուղղութիւնը «օրըստօրէ կը շեշտուի»: «Արեւելեան մամուլ»ում Ապրսամ Ժածկանունով նա հանդէս է եկել «Գրական գրոյցներ» քննադատական յօդուածով, որտեղ մասնաւորապէս, մատնանշել է. «Երբ Զոհրապ մը կը գրէ եւ կը խօսի, Զոհրապ որու երկարատեւ լուսինը կարծես դատարկութեան պէս բան մը բերեր հայ օրագրութեան, անտարբերներն անգամ կը սքափին, քաջ համոզած լինելով որ իր շեշտն ունի սուր եւ մերթ խոր իմաստ մ'որ խորհրդածութեան կը գրգռէ. իր ռնմ... ունի պղպեղ մը որ քիչ կըծելէ ետեւ կը տաքցնէ, գրիչը՝ սլաք մը որ վեր-քիւն հետ դարման մը կը բերէ»⁴⁷: Ի նշան երախտագիտութեան եւ փոխադարձ յարգանքի Զոհրապը 1899ի հոկտեմբերի 17ին շնորհաւորագիր է յղել Մ. Մամուրեանին, նրա գրական, հրապարակախօսական եւ մանկավարժական գործունէութեան 50ամեայ յորելեանի առթիւ:

Գր. Զոհրապն իր նորավէպերով եւ բանասիրական հայեացքներով նշանակալի հետք է թողել ինչպէս իր ժամանակաշրջանի գրողների գրական-գեղագիտական հայեացքների ձեւաւորման, այնպէս էլ հայ գրականութեան զարգացման յետագայ ընթացքի վրայ ընդհանրապէս:

Տիգրան Արփիարեանը «Մասիս»ում հանդէս է եկել «Անունին հմայքը» յօդուածով, որտեղ հիացմունքով գրել է. «Եթէ չի վախճայի մեր բարեկամին համեստութիւնը վիրաւորելէ ... պիտի աւելցնէի թէ Զոհրապ, որ հակառակ իր հագուադէպ երեւումներուն, առաջին կարգի վրայ կը մնայ միշտ մեր ժամանակակից գրագէտներու շարքին մէջ...»⁴⁸: Իսկ երբ «Մասիս»ի յաջորդ համարում լոյս է տեսնում նրա «Փոքուրլը» վէպը, Տ. Արփիարեանը այնքան տրւաւորուած էր գրուածքի ազդեցութիւնից, որ «Մասիս»ի 21րդ համարը անձամբ տարել է նրա տուն, սակայն հեղինակին տանը չգտնելով, այն թողել է դռնապանի մօտ հետեւեալ երկտողով հանդերձ. «Իբրեւ պարզ ընթերցող՝ անկեղծ սքանչացումս նորավե-

47 Արեւելեան մամուլ, Զմիւռնիա 1898, մարտ 15, թիւ 6, 232-233:

48 Մասիս, 1900, մայիս 20, թիւ 20, 306:

պիղ համար եւ իբրեւ թերթին խմբագիր՝ երախտագիտութիւնս, որ անկումէ մը փրկեցիր «Մասիս»ը, գրական զարկ մը տալով անոր»⁴⁹:

1902ի նոյեմբերին Կ. Պոլսից Զոհրապին հեռացնելու նըպատակով կայսերական հրամանագրով նրան նշանակում են Չանդըրլի կառավարչի օգնական: Դա քողարկուած աքսոր էր, որի մասին վկայում են նաեւ նրա գրառումները եւ 1908ի օգոստոսին գրուած հետեւեալ նամակը. «... Կառավարութիւնը... հայ, թուրք, պուլկար եւ յոյն բաղաֆական ամբաստանեալները դատարաններու առջեւ պաշտպանելու համարձակ եղանակէս գայրացած՝ զիս ւստորելու որոշում տուած էր ասկէ գրեթէ եօթ տարի առաջ»⁵⁰: Զգալով աքսորի մօտալուտ վտանգը Զոհրապը դիմում է Պոլսի անգլիական դեսպանութիւն՝ նրա «ազդեցութեան մը ներքեւ ապաստանելու» խնդրանքով, սակայն ստանում է մերժում⁵¹: Չյուսալըքուելով նա դիմում է ռուսական դեսպանութիւն՝ հովանաւորութեան խնդրանքով: 1902ի նոյեմբերին նա նշանակում է ռուսական դեսպանի օգնականի եւ թարգմանչի պաշտօնում:

1905ի յուլիսի 8ին Կ. Պոլսում Համիդի դէմ կատարուեց մահափորձ, սպանուեց 26, վիրաւորուեց 58 մարդ: Սկսուեց խուզարկութիւնների եւ ձերբակալութիւնների այնպիսի մի շրջան, որի ընթացքում կարճ ժամանակով ձերբակալուեց նաեւ Զոհրապը: Թէպէտ նա շուտով ազատուեց բանտից, սակայն այսուհետ գրանցուեց Համիդեան ոստիկանութեան եւ լրտեսների «սեւ ցուցակում»:

1906ի հոկտեմբերին Զոհրապը Շուրայի Պետական խորհրդում պաշտպանեց բուլղարացի մի յեղափոխականի դատը, որը պատճառ հանդիսացաւ, որպէսզի Արդարադատութեան նախարարի հրամանով նա զրկուէր թուրքական դատարաններում փաստաբանական գործունէութիւնից: Այդ մասին Զոհրապը իր նամակներից մէկում գրում է. «...Շատ մը խորհելէ վերջ Արդարութեան գործերու անարդար նախարարը ...առաջարկեց որ ես թե՛ փաստաբանական եւ թե՛ ռուսական թարգմանի պաշտօնը չէի կրնար իմ անձիս վրայ միացնել եւ պատուիրեց, որ զիս օսմանեան դատարաններու մէջ չընդունին... Երկուտարիէ, որ զիս կարգելէն կոր հաց նարելու...»⁵²: Այս հանգամանքը պատճառ դարձաւ, որպէսզի նա

49 Գաթ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, 55/5:

50 Մանգումէի էֆէնար, Կ. Պոլիս 1908, օգոստոս 14/27, թիւ 2201:

51 «Ժամանակ, Կ. Պոլիս 1908, նոյեմբեր 6/19, թիւ 20:

52 Արեւմտահայ գրողների նամականի, գրական ժառանգութիւն, գիրք VI, պրակ 1, 46:

առժամանակ հեռանար Պոլսից եւ հաստատուէր արտասահմանում⁵³:

1908ի մայիսին Փարիզում լոյս տեսաւ «Հպատակութեան տարբերութեան աղագաւ ժառանգելու անհնարինութիւնն ըստ օսմանեան օրինաց. Իթիլաֆ դար» աշխատութիւնը: 1909ի փետրուարին «Լա Լուա Նուվել» հանդէսը անդրադառնալով սոյն գրքին մատնանշում է, որ նիւթը բարդ է եւ անծանօթ, սակայն շարադրանքի պարզութեամբ ու մատչելիութեամբ հետաքրքիր է եւ, որ հեղինակը հասել է իր նպատակին⁵⁴: Ֆրանսիական «Մատենագիտական նօթեր» հանդէսը նոյնպէս բարձր է գնահատել այս աշխատութիւնը, քանի որ այն հիմնաւոր պատկերացում է տալիս մոսկովմանական իրաւագիտութեան մասին, իսկ «Բիւլետեն քիքլոգրաֆիկ» թերթն այն համարել է կարեւոր, օգտակար ու գնահատելի, քանի որ ինչ ներկայացուած է գրքում, անծանօթ էր ֆրանսիական իրաւագիտութեանը⁵⁵: 1909 թուականին Կ. Պոլսում Զոհրապը հրատարակեց «Պատժական տեսութիւն» օրէնադրութեան դասագիրքը (թուրքերէն), որի հիմքում ընկած էր Օսմանեան իրաւագիտական համալսարանում իր կարդացած դասախօսութիւնների նիւթերը:

Գր. Զոհրապը Ֆրանսիայի միջազգային պատմութեան ակադեմիական ընկերութեան պատուաւոր անդամ էր: Ընկերութեան կողմից նրան շնորհուել է ոսկէ մեդալ⁵⁶:

1908ի յուլիսին կայսերական հռչակագրով Թուրքիայում վերահռչակուեց 1876ի Օսմանեան սահմանադրութիւնը եւ ընդհանուր ներում շնորհուեց նաեւ քաղաքական այլախոհներին⁵⁷: Բազմաթիւ վտարանդիների հետ Պոլիս վերադարձաւ նաեւ Զոհրապը: Պոլսի թերթերը խանդավառութեամբ արձագանքեցին անուանի մտաւորականի վերադարձը: Այսպէս, օրինակ, «Արեւելք»ը գրում է. «Բաղձալի է որ տաղանդաւոր փաստաբանը ձեռք առնէ իր գրական եւ իրաւագիտական քեդուն գործունէութիւնը. հիմա որ ամենէն աւելի ասպարէզ կը գտնէ իր խիզախ գրչին՝ գրականութեան

53 Արտասահմանում ապրած տարիներին մշտապէս գտնուել է թուրքական լրտեսների հսկողութեան տակ:

54 Գաթ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, գ. 58:

55 Անդ:

56 Ազատամարտ, Կ. Պոլիս, 1912, քիւ 789:

57 Անդ:

մէջ եւ անկողմնակալ ու նշմարտադատ ունկնդրութիւն դատարան-ներուն մէջ»⁵⁸։

1908-1915 թուականները Գր. Զոհրապի հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային կեանքի ամենաբեղուն տարիներն էին, երբ նա թուրքական պառլամենտի եւ Ազգային ժողովի պատգամաւոր է ընտրուում գրեթէ բոլոր ընտրութիւններում եւ եռանդուն մասնակցութիւն է դրսեւորում օրէնսդրական աշխատանքներում, հանդէս է գալիս կանոնադրական ընդարձակ ճառերով ու բանախօսութիւններով, տարբեր հարցերի վերաբերեալ եւրոպական չափանիշներով գրուած տեղեկագրերով ու ատենագրութիւններով։

Համիդեան ռազմավարչական բռնատիրութեան պայմաններում Զոհրապը եղել է հայերի կեանքը քիչ թէ շատ տանելի դարձնելու համար պայքարող, համարձակ, ըմբոստ ու պատկառազու հասարակական-քաղաքական գործիչ, անզուգական հոեւոր ու քննադատ։ Նրա պառլամենտական ճառերի մեծագոյն մասը քննադատութիւններ էին օսմանեան վարչակարգի վարած հակամարդկային, հակահայկական ռեակցիոն քաղաքականութեան դէմ։

1909ի մարտի 31ին տեղի ունեցաւ Ադանայի ջարդը, երբ մէկ օրուայ ընթացքում սրի քաշուեց 30 հազար հայ։ Հայ մտաւորականներից Զոհրապն առաջինն էր, որ մի խումբ հայ երեսփոխանների հետ թուրքական պառլամենտում հարցապնդում արեց Ադանայի կոտորածի կապակցութեամբ։ Իր ելոյթներից մէկում նա խստագոյնս քննադատեց Ադանայի կոլսակալ Ջեւադ բէյին, ներքին գործերի նախարար Բեուֆ փաշային եւ խորհրդական Ատիլ բէյին կոտորածի պատասխանատուութիւնից խուսափելու եւ դրանում հայերին մեղադրելու փորձերի համար՝ իբր այդ նախճիրի պատճառը հայերն էին եւ հայկական կոլսակցութիւնները։ Նա համարձակօրէն յայտարարեց, որ Ադանայի եւ նրա մերձակայ չրջանների կոտորածները թուրքական իշխանութիւնների ձեռքի գործն է, որին նրանք խնամքով նախապատրաստուել էին ամիսներ առաջ։

Նա մարգարէաբար գուշակում էր Հայոց ցեղասպանութեան եւ Մեծ Եղեռնի դարանակալ սարսափները. «Մոլեռանդութիւնը, գրում է նա, - ցորչափ մնայ այս երկրին մէջ... երբեք ապահովու-

թիւն չի կրնար ըլլալ հայերու համար: Աղէտը պիտի ուշանայ, մութիւն մէջ պիտի սպասէ. Ակնդէտ պիտի սպասէ իր յաւիտեանական արիւմաներկ դաշոյնը երեւցնելով...»:

Աղանայի կոտորածի վերաբերեալ նա Օսմանեան խորհրդարան ներկայացրեց առաջարկութիւնների փաթեթ, որով պահանջում էր՝ ա) պետական բիւջէից Աղանայի եւ Հալէպի նահանգներին յատկացնել 20 հազար ոսկի, բ) Աղանայում ստեղծել պատեհօրազմական ատեան եւ պատժել կոտորածին մասնակից մեծ ու փոքր պաշտօնեաներին, գ) Աղանա եւ Հալէպ զօրք ուղարկել եւ այնտեղ հաստատել կայունութիւն եւ անդորրութիւն: Ձայների մեծամասնութեամբ վերոնշեալ բոլոր պահանջներն ընդունուեցին: Նա մասնակցեց նաեւ հայ երեսփոխանների գումարած նիստին, որտեղ որոշում ընդունուեց՝ ա) բողոքել կոտորածի մեղաւորներին ներման արժանացնելու կառավարութեան ծրագրերի դէմ, բ) բողոքել հայկական գաւառներում բանտարկուած ոճրագործներին ներում չնորհելու կառավարութեան փորձերի դէմ, գ) կառավարութեանն առաջարկել, որպէսզի պաշտօնապէս հերքուի Աղանայի զինուորական ատեանի տեղեկագիրն այն մասին, որ իբր նախճիրի պատճառը հայերն են եւ հայկական կոմիտէները⁵⁹:

Անդրադառնալով այդ օրերի իրադարձութիւններին օսմանեան երեսփոխան, ՀՅԴ գործիչ Վահան Փափազեանը (Կոմս.-1876-1973) գրում է. «Յանուն ո՛չ միայն հայ երեսփոխաններու, այլեւ քրիստոնեայ միւս երեսփոխաններու Ձոհրապը կարդաց ձեւակերպուած հարցապնդումը եւ արտասանեց իր ամենէն յուզիչ եւ սքանչելի ճառը: Խարանդ բոցեր էին որ կը ժայթփէին իր բերնէն»⁶⁰:

Երուանդ Օտեանը «Մամանայում» (թիւ 1,11,16) տպագրում է «Գրիգոր Ձոհրապ» յօդուածաշարը, որտեղ Ձոհրապին համարում է «ազգային ժամանակակից փառքերէն մին», որը «քաղած է հայ մտաւորականութեան ընտրելախմբին մէջ», ունի «ինքնատիպ, յանդուգն ու պատկերաւից ոն»: Նա բարձր գնահատելով Ձոհրապի հասարակական-քաղաքական գործունէութիւնը իրաւացիօրէն գրում է. «Իբրեւ երեսփոխան Գրիգոր Ձոհրապ վարիչ ոյժ մըն է. Ազգային ժողովին մէջ ... Իբրեւ հայ մեպուս Ձոհրապ Օսմանեան խորհրդարանին մէջ հայ մնացած եւ ամենէն հանդիսաւոր վայրկեաններում իր ազգին դատը պաշտպանեց առանց վերապահումի:

59 Ազատամարտ, Կ. Պոլիս 1909, յուլիս 9/22, թիւ 26:

60 Ժամանակ, Կ. Պոլիս 1909, 20/3, մայիս, թիւ 155:

Ատանայի ջարդերու պատասխանատուները ճշդելու գործին մէջ եթէ Զոհրապ չըլլար, թերեւս ջարդուողները յանցաւոր հռչակուէին»։ Նկատում է նաեւ, որ Զոհրապը նախ կարողանում է իր շահը տարբերել ազգի շահից եւ ապա ի հարկին դրանք հաշտեցնել միմեանց հետ «առանց միմ միւսին գոհելու»։ 1909ին Կ. Պոլսում լոյս տեսաւ Զոհրապի «Խղմամտանքի ճայներ» ժողովածուն, որի վաճառքից գոյացած «ամբողջական հասոյթը» յատկացուեց Ադանայում զոհուածների ընտանիքներին։

Պարբերական մամուլում եղել են դրական արձագանքներ այս ժողովածուի վերաբերեալ։ Այսպէս, օրինակ, «Ազդակ»ը արձանագրում է. «...տաղանդաւոր հեղինակ-վարպետի պատկերները խոր դիտող եւ զգացնող հոգեբանի մը անհուն թախիծով եւ դառնութեամբ լեցուած մարդու արտադրութիւնն են, որի գեղարուեստական գործը ո՛չ ազգ եւ ո՛չ հայրենիք կարող է ունենալ»⁶¹։ «Մըշակ»ում սոյն ժողովածուի վերաբերեալ տպագրուել է է ստորագրութեամբ գրախօսականը, որտեղ արծարծուում է այն կարծիքը, որ եթէ Երեսփոխանական ժողովում Զոհրապը «ուղիղ մարդն է», ապա գրականութեան մէջ «սրտի ու խղճի մարդն է», «կորովամիտ տաղանդաւոր գրող» է, որը գրում է «եւրոպական քիւրեղացած մաշակով»։ Իսկ «Բիւզանդիոն»ը մատնանշում է, որ Զոհրապին բնորոշ գրաւիչ ու պերճախօս լեզուով գրուած հզօր ու հմայիչ դրուագներ կան իրական կեանքի եւ ազգային բարքերի վերլուծութիւնների մասին. «Նորավէպի այս եզակի վարպետը հոգեբանական նուրբ քննութեամբ մը կը պարզէ ախտաւորակ կողմը մեր ընկերային կեանքի, երեւան կը բերէ բարոյական եղեռները եւ աղֆատին, անպաշտպանին, ինկածին, անիրաւուածին վրդովիչ հակադրութիւնը՝ անսանձ կիրքով անողոք հարուստին եւ ընկալեալ խտաբարոյ եւ անտեղի տալի օրէնքներուն, կանոններուն քով»⁶²։

Շատերի նման Գր. Զոհրապին նոյնպէս մտահոգել է Հայկական հարցը։ Կանխատեսելով իթթիհատականների հայաջինջ քաղաքականութեան միտումները, սեփական նախաձեռնութեամբ նա մի շարք բանակցութիւններ է վարել տարբեր երկրների դեսպանատների հետ՝ հայկական նահանգներում բարեկարգումներ մտցնելու վերաբերեալ։

Զոհրապի նախաձեռնութեամբ կազմուում եւ Բարձր դռանն է ներկայացուում յիշատակագիր, որում մատնանշում է Վանի,

61 Ազդակ, Կ. Պոլիս 1909, յունիս, թիւ 21:

62 Բիւզանդիոն, Կ. Պոլիս, մայիս, թիւ 3825:

Բաղէշի, Խարբերդի եւ Էրզրումի նահանգներում տեղի ունեցող հարստահարութիւնների ու ասպատակութիւնների մասին: Վերոնշեալ նահանգներում անդորրութիւն եւ կարգ հաստատելու համար առաջարկում է այդ նահանգներում նշանակել հայ կուսակալներ, ինչպէս նաեւ պատժել իրենց պարտականութիւններում թերացած պաշտօնեաներին ու ոստիկանական սպաներին, դատական պատասխանատուներին, ոստիկանների մէջ ընդգրկել նաեւ հայերին, կառուցել երկաթգծեր, հարկադրաբար շէները լքած գիւղացիներին վերադարձնել իրենց պատկանած հողերը, անձեռնմխելի ճանաչել վանքապետական ու դպրոցական հողատարածքները, բիւջէում նախատեսել Ադանայի կոտորածից տուժածներին յատկացուելիք գումար եւ այլն:

1913ի մարտին գրում է «Հայկական հարցը փաստաթղթերու լոյսին տակ» Ֆրանսերէն լեզուով աշխատութիւնը եւ ուղարկում Փարիզ Ա. Չոպանեանին՝ խնդրելով նրան յանձն առնել «քացարձակ գաղտնապահութեամբ» տպագրելու եւ տարածելու գործը⁶³: Այսպէս՝ 1913ի մայիսին Փարիզում Մարսել Լեար ծածկանունով տպագրում է Գր. Ջոհրապի գիրքը, որը բաղկացած էր բուն ուսումնասիրութիւնից (էջ 3-25) եւ յաւելումից (էջ 27-73): Յաւելումածում գետեղում են 15 վաւերագիր եւ մէկ քարտէզ: Գրքի տպագրութեան առթիւ Ա. Չոպանեանը գրում է. «Գիրքը տպուեցաւ եւ Ազգային պատուիրակութիւնը զայն դրկեց ամբողջ եւրոպական ու ամերիկեան մամուլին: ... Ոչ ոք գիտցաւ թէ գործին հեղինակը Ջոհրապի էր, ոչ իսկ Պօղոս Նուպար Փաշան, որուն ըսի թէ ազնիւ ֆրանսացի մըն էր այդ գիրքը յօրինողը»⁶⁴: Գրքի հրատարակչը Ֆրանսիացի Օգիւստ Շալամելն էր: Չոպանեանը գրքի 100 օրինակ ուղարկել է Պետերբուրգ, Հռոմ, Վիեննա, ինչպէս նաեւ հայկական կոմիտէներին, դեսպանատներին, նախարարութիւններին եւ օրաթերթերի խմբագրութիւններին:

1913ի յուլիսի 26ին «Մշակ»ը (թիւ 162) տպագրում է «Լեարի գիրքը» քրոնիկը, որտեղ ներկայացնում է աշխատութեան կառուցումածքն ու բովանդակութիւնը, բարձրացնում նրա յոյժ կարեւորութիւնը: «Այժմ, - գրում է թերթը, - երբ Հայկական չարաքաստիկ հարցը մորից է հերթական դարձել, Լեարի գրքայիլը եւրոպացու համար ընդհանրապէս եւ մասնաւորապէս ռուս ընթերցողի համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում»:

63 Գաթ, Գրիգոր Ջոհրապի ֆոնդ, 66, 67/1:

64 Անդ, նաեւ՝ Անահիտ, 1930, թիւ 3,2:

Գրքոյկի մէջ առկայ է փաստագրական հարուստ նիւթ արեւմտահայութեան քաղաքական վիճակի, մշակոյթի, դպրոցի եւ տնտեսական կեանքի վերաբերեալ: Գիրքը վաւերագրական կարեւոր փաստաթուղթ է ինչպէս ժ.թ. դարի երկրորդ կէսի եւ ի. դարի սկզբի արեւմտահայ քաղաքական ու մշակութային կեանքի լուսաբանման, այնպէս էլ Հայաստանի նոր շրջանի պատմութեան ուսումնասիրման համար:

Իր քաղաքական հայեացքներով Զոհրապն ունէր ռուսական կողմնորոշում: Նա քաջ համոզուած էր, որ նոյնիսկ ռուսական գաղութային քաղաքականութեան պայմաններում նրա տիրապետութեան տակ ապրող ազգութիւնները կ'ունենան ապրելու եւ զարգանալու հնարաւորութիւն, քանի որ «... Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագայի պետութիւն եւ այն լուծը, որի մասին շատ են խօսում, մշտապէս չի տիրելու այնտեղ»⁶⁵: Մինչդեռ համոզուած էր, որ Թուրքիայում նոյնիսկ չկային բաւական թուով մարդիկ, որոնք հաւատային նրա վերածնունդին, բնականաբար՝ «Հաշուի մէջ չեն այն 10-20 քախտախնդիրները,՝ գրում է նա,՝ որոնց ձեռքն է կառավարութիւնը այսօր եւ որոնք իրենց վերջին *atout*-ը կը խաղան: Ինչ կ'ուզէք որ ըլլար այս երկրին վիճակը, երբ զայն վարողները կը կոչուին Թալաթ, տոքթ, Նազըմ, Պեհատտին Շաֆիր, Միտհաթ Շիւքրի, Խալիլ եւ փառատենչիկ սպաներ, որոնք կը կոչուին Էմվեր, Ճեմալ, Ֆեթհի, Հագըլ Հոսֆեմ, երեկուս միւլագիւմներ (*Կիսնապետեր՝ Շ. Ո.*) է, այսօր արքայական գերդաստանին փեսայացած կամ դեսպան, երեսակայեցէք, կամ մախարաբ դարձած»⁶⁶:

1914ի յուլիսին գերմանիան պատերազմ յայտարարեց Ռուսաստանին: Սկսուեց առաջին համաշխարհային պատերազմը, իսկ յուլիսի 20ին կնքուեց գերմանա-թուրքական գաղտնի պայմանագիրը, որով Թուրքիան վերջնականապէս ընդգրկուեց պատերազմի մէջ: Նոյն թուականի նոյեմբերի 1ին սուլթանի հռչակագրով Թուրքիան պաշտօնապէս պատերազմ յայտարարեց Ռուսաստանին, Ֆրանսիային, Անգլիային եւ Սերբիային: Նոյն օրը թուրք մուսուլման ամբողջ քանդեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում զոհուած սպաների ու զինուորների յիշատակին կառուցուած յուշարձանը, յարձակուեց «թշմաղի տիրու-

65 Մատեմադարան, *Կաթողիկոսական դիւան*, ց. 20, ք. 238, գ. 8:

66 Անդ:

թեանց պատկանող» առեւտրական շինութիւնների վրայ, հողին հաւասարեցրեց ռուսահպատակ Թոքաթլեանի հաստատութիւնը⁶⁷:

Գր. Զոհրապին այդ օրերի դէպքերի մասին գրառումներ է կատարել իր օրագրում, որոնք մեզ համար կարեւոր են նրա քաղաքական համոզմունքների լուսաբանման տեսանկիւնով: Այսպէս՝ Զիհադի (Սրբազան պատերազմ՝ Ծ. Ո.) հռչակումը նա համարել է «մեծ կատակերգութիւն», Թոքաթլեանի համալիրի վանդալիզմը պայմանաւորել է ոչ միայն նրա տիրոջ ռուսահպատակութեամբ, այլ նաեւ «իբրեւ հայ տնտեսական ոյժ մը» լինելու հանգամանքով: Թոքաթլեանի հաստատութեան վանդալիզմի մէջ նա կանխատեսել է նաեւ «Ժամանակի նշաններից» մէկը⁶⁸:

Գր. Զոհրապի գրական ժառանգութեան մէջ մանկավարժական բնոյթի աշխատութիւններ չկան, քիչ է զբաղուել նաեւ մանկավարժական պրակտիկ գործունէութեամբ⁶⁹, այսուհանդերձ նա քաջածանօթ էր ազգային դպրոցի խնդիրներին, եռանդուն մասնակցութիւն է ունեցել այդ խնդիրների լուծման եւ դպրոցի բարեփոխման աշխատանքներին: Նա գերազանց տիրապետում էր մանկավարժական առաջադիմական ուղղութիւններին, ծանօթ էր դասական մանկավարժների աշխատութիւններին եւ նրանց դաւանած մանկավարժական տեսութիւններին: Բացի դրանից նրա ստեղծագործութիւնները, մասնաւորապէս նորավէպերը գեղարուեստական արժէքներից զատ ունեն նաեւ ուսուցողական, դաստիարակչական եւ հոգեճանաչողական արժէքներ, հետեւաբար անգնահատելի է դրանց դերը հասունացող սերնդի դաստիարակութեան գործում:

Ռուբէն Զարդարեանի (1874-1915) «Մեղրագէտ»ներում, Հրանտ եւ Զապէլ Ասատուրների «Թանգարան»ներում եւ նախակրթարանների բարձր կարգերի համար այլ հեղինակների ստեղծած դասագրքերում զետեղուել են Զոհրապի գործերից ընտրանի հատուածներ՝ «Էջեր ուղեւորի մը օրագրելն», «Ճիտիմ պարտքը», «Իրիկնամուտ մը Սեւ ծովուն մէջ», «Ապրիմ-մեռնիմ» եւ այլն:

Գր. Զոհրապի գրական ֆենոմենը, նրա անկրկնելիութիւնը եւ հզօրութիւնը իրականութեան եւ երեւոյթների գեղարուեստա-

67 Մկրտիչ Թոքաթլեան, ռուսահպատակ մեծահարուստ, Կ. Պոլսում ունէր հիւրանոցային ու ռեստորանային հաստատութիւնների համալիր:

68 Ամդ, 65:

69 Իբրեւ դասախօս Զոհրապն աշխատել է Օսմանեան իրաւագիտական համալսարանում:

կան ընկալման եւ պատկերման հակիրճութեան մէջ էր: Գրական սիւսթեմային ամբողջական մի համաձուլուածք իր հանգոյցի, կուլմինացիայի, զարգացման եւ լուծման գեղարուեստական պատճառաբանուած փուլերով ամփոփուած է ընդամէնը մի քանի էջի մէջ: Սրանով պէտք է արժեւորել եւ ընկալել Զոհրապի գրելա՝ ոճը, նրա ուժն ու վարպետութիւնը, որն արտացոլուած է ինչպէս նորալէպերում, այնպէս էլ նրա միւս ստեղծագործութիւններում: Տեղին է մէջբերել Յովհաննէս Ասպետի⁷⁰ Զոհրապի գրականութեանը եւ նրա անձին տուած հետեւեալ բնութագրութիւնը. «Իր բոլոր ըրածը. թողածը, գրածը, խօսածը, գրում է նա.՝ ուղիղ գիծ է, որոշ կարգէ, կապէ դուրս է բոլորովին եւ այդ իր գլխաւոր յատկանիշը ըլլալով հանդերձ, իր արժանիքն ալ կ'ըլլայ ու կը մնայ... Իր գրականութիւնն ալ երկու քառի մէջ կարելի է ամփոփել իր էութեանը պէս. խիզախ ու սաստիկ, թէ՛ ոմը, թէ՛ բովանդակ իր գրական կեանքը խիզախութիւն է»⁷¹:

Իր ճառերում, բանախօսութիւններում, Ազգային ժողովի ատենադրութիւններում եւ հրապարակախօսութիւններում տարբեր ժամանակներում եւ տարբեր առիթներով Զոհրապն անդրադարձել է ազգային դպրոցի բարեփոխման, եւրոպական չափանիշներով կրթական կանոնադրութիւնների եւ ծրագրերի ստեղծման, կնոջ կրթութեան եւ իրաւահաւասարութեան, դպրոցի, ուսուցման ու դաստիարակութեան տեսութեան տարաբնոյթ հարցերի քննարկմանն ու վերլուծութեանը:

Զոհրապի ուշադրութեան կենտրոնում մշտապէս եղել է եւրոպական երկրներում ուսանող հայ երիտասարդութիւնը, նրանց սոցիալական, իրաւական ու բարոյական ապահովութեան հարցը: Օսմանեան խորհրդարանում նա հարցապնդում մտքեց, որպէսզի Եւրոպայում սովորող հայ երիտասարդների հանդէպ զինուորագրութեան օրէնքը պարտադիր չհամարուի եւ նրանց տրուի հնարաւորութիւն ուսումնառութիւնը աւարտին հասցնելու համար:

Եւրոպայում սովորող երիտասարդութեանը օգնելու նպատակով Զոհրապը մշակեց «Եւրոպական հայ ուսանողական հաստատութիւնը» խորագրով ծրագիրը, որտեղ սահմանուած է հաստատութեան նպատակն ու խնդիրները. «Հաստատութեան նպատակն է հայ երիտասարդութեան, պատանութեան եւրոպական զարգացում

70 Օննիկ Զիֆթ, Սարաֆ (Յովհաննէս Ասպետ.-1879-1932) արձակագիր, հրապարակախօս:

71 Մասիս, 1901. քիւ 20, 307-308:

տալ (գիտական, արհեստագիտական եւ գեղարուեստական), դիւրինացնելով եւ ապահովելով հայ պատանութեան եւ ուսանողութեան բնակութիւնն ու սնունդը Եւրոպայի զանազան կեդրոններու մէջ»։ *Ծրագրում ըստ սովորողների ուսումնառութեան տարիների սահմանուել է նաեւ օգնութեան ձեւերն ու չափը*⁷²։

Գր. Զոհրապը բազմիցս մասնակցել է Կ. Պոլսի թաղային եւ մասնաւոր վարժարանների տարեվերջեան հանդէսներին եւ մրցանակաբաշխութիւններին։ Բարձր գնահատելով դպրոցի դերը ազգի գոյապահպանման գործում նա իրաւացիօրէն կարծում էր, որ *դպրոցը «մեզ ճշմարտապէս ազգային ու վաղորդայնի կեանքին պատրաստող հաստատութիւն մըն է», հետեւաբար պահանջում էր դպրոցների համար ստեղծել անհրաժեշտ նիւթական միջոցներ, բարելաւել ուսուցիչների սոցիալական պայմանները, բարեփոխել կրթական ծրագրերն ու դասագրքերը՝ գիտական ու գործնական ժամանակակից պահանջներին համապատասխան։ Այդ նպատակով նա օսմանեան խորհրդարանում բարձրացրեց վանական հասոյթների մատակարարման արմատական բարելաւման հարցը, որպէսզի դրանք յատկացուեն կրթութեանն ու լուսաւորութեանը, նըպաստեն ազգային դպրոցի զարգացմանն ու բարգաւաճմանը*։

1913ի սեպտեմբերի 27ին Զոհրապն Ազգային ժողովի ատենապետ Նազարէթ Տաղաւարեանին⁷³ է ներկայացնում կրթական խնդրի մասին առաջարկներ, միաժամանակ մատնանշելով, որ «Հայութեան վերականգնումը միայն քաղաքականութեամբ ձեռք չի կրնար բերուիլ, անոր մէջ մեծագոյն քաժինը դարձեալ կրթութեան կ'իյնայ»։ *Մշակում է 16 յօդուածից բաղկացած ընդարձակ ծրագիր, որն ունէր երեք բաժին՝ ա) ազգային վարժարաններ, բ) օտար վարժարաններ, գ) լրացուցիչ միջոցներ*։

Առաջարկում է քուէարկութեան դնել հետեւեալ յօդուածները․

ա) Պատրիարքարանում ստեղծել կրթական դիւան, բ) վարչութեանը արտօնել կրթութեան համար տարեկան տրամադրել

72 Գր. Զոհրապի մօտ այդ գաղափարը յղացել էր 1909-1912 թուականներին, երբ ապրելով Փարիզում եւ Եւրոպական այլ քաղաքներում՝ մօտիկից տեսել ու հաղորդակից էր դարձել հայ ուսանողութեան սոցիալական դժուարութիւններին ու կարիքներին։

73 Նազարէթ Տաղաւարեան (Չատրեան 1862-1915), բժշկագիտութեան դոկտոր, գիւղատնտես, մանկավարժ, խմբագիր, ազգային եւ օսմանեան երեսփոխան, ռամկավար կուսակցութեան ակնաւոր գործիչ։

400 ոսկի, գ) կրթական դիւանը կազմել եւ նրա աշխատանքները սկսել 1914ի յունուարի 1ից:

Որոշուեց սոյն վաւերագիրն ուղարկել Դաստիարակութեան դիւանին, որի անդամներն էին ազգային երեսփոխան, կրթական գործիչ Մարկոս Նաթանեանը եւ Հրանտ Ասատուրը: 1914ի ապրիլի 8ին Ազգային ժողովի հերթական նիստում ընթերցուեց կրթութեան հարցերի մասին Զոհրապի առաջարկների վերաբերեալ Դաստիարակութեան դիւանի տեղեկագիրը: Դիւանը ներկայացրեց 3 կէտից բաղկացած օրինագիծ՝ ա) Պատրիարքարանը հաստատում է կրթական դիւան, բ) Նորաստեղծ դիւանը պէտք է զբաղուի արեւմտահայութեան կրթութեան գործով «ըստ այն հրահանգին, որ պիտի պատրաստուի Ազգային վարչութեան կողմէ Զօհրապ էֆ առաջարկութեան հիմերուն վրայ», գ) Վարչութիւնը պէտք է այդ նպատակին յատկացնի տարեկան 40 հազար դրուշ:

Օրինագիծը մտցւում է օրակարգ՝ յետագայում՝ քննարկելու համար⁷⁴:

Բիւզանդ Քեչեանի (1859-1927) «գործ կայ, գործող չկայ» խմբագրականի առիթով Զոհրապը «Արեւելք»ում տպագրեց «Դարավերջին դաստիարակութիւն» յօդուածը, որտեղ ոչ միայն յստակօրէն սահմանեց ազգային դաստիարակութեան նպատակը եւ խնդիրները, այլ նաեւ մերժեց Քեչեանի այն տեսակէտը, ըստ որի «Վարժարան վաճառականութեան զբաղման ընդունակ պատանիներ պէտք է պատրաստեն»: Ինչպէս Ալիշանը Զոհրապը նոյնպէս համաձայն չէր կրթութեան նիւթապաշտական ոգուն «Ո՛չ, - գրում է նա, - դպրոց չեն երթար տղաք, որպէսզի ստակ շահելու մամբան ստրկին, ո՛չ այդ շահամոլ ոգին չի պիտի առաջնորդէ երբեք հայ մանկւոյն. տղան պիտի երթայ հոն մախ մարդու եւ քաղաքացւոյ գիտելիքը ստրկելու»⁷⁵: Նա առաջ քաշեց այն գաղափարը, որ դպրոցի նպատակը եւ առաջնահերթ խնդիրը ազգային նկարագիր ունեցող եւ ազգային շահերով ապրող մարդու դաստիարակութիւնն է, որը պահանջում է «մեծագոյն մտաւորական զարգացումը ձեռք բերելու», իսկ մայրենի լեզուն ու գրականութիւնը «պէտք է գերիվեր մնան ամէն ուսումն եւ գրագիտութեմէ»:

Ռէթէոս Պէրպէրեանը (1848-1907) բարձր գնահատեց Զոհրապի «Դարավերջին դաստիարակութիւն» յօդուածը, այն համարեց «գայրոյթի աղաղակ», պաշտպանեց նրա առաջադրած մանկա-

74 Բիւզանդիոն, 1914, 19/2 մայիս, քիւ 5328:

75 Արեւելք, 1890, դեկտեմբեր 11/23, քիւ 2072:

վարժական դրոյթները, իսկ «... նախ մարդու եւ քաղաքացույց գիտելիքը ստրկելու» պահանջը նա գնահատեց դպրոցի նպատակի «քաջ սահմանում»⁷⁶:

Ձոհրապը երիտասարդութեանը ազգասիրութեան եւ այլասիրութեան կոչ է անում. «Սիրեմք Հայաստանը ոչ միայն անոր համար որ մեր հայրենիքն է այն այլեւ անոր համար նաեւ, որ դժբախտ եւ ցաւագին է այն»⁷⁷: 1913ի Հոկտեմբերի 13ին Հայ գրի ու տպագրութեան յօրէկեանական հանդէսում արտասանած իր ճառում մատնանշում է. «Երբ ուշադրութեամբ հետեւիմք հայ պատմութեան, կը տեսնեմք, որ գրի գիտը հայուն գոյութեան ամենամեծ ազդակը եղած է... Եթէ քննեմք ազգի մը իյնալու պատճառները, պիտի տեսնեմք թէ այն ազգը որ եսականութեամբ օժտուած է որքան յոյս եւ կենդանութիւն ալ ունենայ իր մէջ, նորէն կ'իյնայ այդ ազգը: Իսկ երբ եսականութեան տեղ այլասիրութիւն եւ ազգասիրութիւն տիրէ, որքա՛ն ալ յուսահատ ըլլայ այդ ազգը նորէն չը մեռնիր»⁷⁸:

Գր. Ձոհրապն իր հոգու եւ մտքի բոլոր թելերով ընդելուզուած էր ինչպէս իր ժողովրդին, այնպէս էլ ազգային դպրոցին: «Հոմ Բոլեմ» յօդուածը, որտեղ ներկայացնում է ամերիկեան սոյն դպրոցի կրթական հանդէսից ստացած տպաւորութիւնները, ուրախութեամբ արձանագրում է, որ այդ «օտար հարկի տակ» պահպանուել եւ հնչել է Հայ լեզուն: Նոյն թերթում Ռ. Պէրպէրեանը հանդէս է եկել «կիրակնօրեայ խօսքեր» նօթագրութեամբ, որտեղ մանկավարժական տեսանկիւնից արժեւորել է Ձոհրապի «Հոմ Բոլեմ» յօդուածը, հեղինակին համարելով «ազգին ամենէն ցարգացեալ միտքերէն մին»⁷⁹:

Գր. Ձոհրապի ուշադրութեան կենտրոնում մշտապէս եղել են ոչ միայն ազգային դպրոցները, այլ նաեւ ապաստարան-որբանոցները, Հայոց ազգային հիւանդանոցը, մշակութային կենտրոնները, որոնց աջակցել է ինչպէս դրամական մշտական նուիրատուութիւններով, այնպէս էլ Օսմանեան խորհրդարանում եւ Ազգային ժողովում իր պատգամաւորական մանդատով: Այսպէս, օրինակ, ազգային երաժշտութիւնը քաջալերելու նպատակով առաջարկել է մրցանակներ շնորհել եւ պարգեւներ յատկացնել⁸⁰: Օս-

76 Ծաղիկ, Կ. Պոլիս 1890, դեկտեմբեր 15, թիւ 14:

77 Ժամանակ, Կ. Պոլիս 1913, հոկտեմբեր 14/27, թիւ 1604:

78 Անդ:

79 Արեւելք, Կ. Պոլիս 1892, ապրիլ 15/27, թիւ 2447:

80 Բիւզանդիոն, Կ. Պոլիս 1911, մայիս, թիւ 4431:

մանեան խորհրդարանի նիստում պահանջել է աւելացնել Հայոց ազգային հիւանդանոցի նպաստը, որը օսմանեան սահմանադրութիւնից յետոյ աւելի սուղ էր քան Համիդի օրօք: Այդ մասին նա գրում է. «Եթէ այսօր կայ ազգ մը, որ ամենէն աւելի մեր համակրանքին առարկայ ըլլալու է, այն անպաշտպաններուն ազգն է ... Եթէ կայ ազգ մը, որ մեր ամենուս բարեգթութեան արժանի է, առիկա անօգնականներուն դասն է»⁸¹:

«Անօգնականներուն դասի» առաջին շարքում հայ որբ երեխաներն էին, որոնց հանդէպ Զոհրապի գթասրտութիւնը սահմաններ չի ունեցել: Այսպէս, օրինակ, այնքան սերտ էր Զոհրապի կապը Գարակէօզեան որբանոցի սաների հետ, որ երեխաները նրան նուէր են ուղարկել իրենց պատրաստած ձեռքի աշխատանքները: Անուանի մտաւորականը իր հերթին շնորհակալական նամակի հետ ուղարկել է նաեւ դրամական նուիրատուութիւն երեխաներին⁸²:

Հայ աւանդական ընտանիքի ամբողջեան պահպանման համար Ազգային ժողով ներկայացրեց առաջարկութիւնների ծաւալուն փաթեթ՝ հանդէս գալով ամուսնական հարցերի մասին դատական կանոնաւոր կազմակերպութիւն ստեղծելու առաջարկով⁸³:

Զոհրապի առաջադրած մանկավարժական կարեւոր հիմնահարցերից մէկը ընտանիքի, կնոջ իրաւահաւասարութեան եւ ազատագրութեան հարցն էր: Նա կարեւորում էր «կիմ ու այր հաւասար սկզբունքը», պաշտպանում էր կանանց եւ երեխաների իրաւունքները: Ամուսնական անհաւատարմութեան հարցում նրա կարծիքով չպէտք է մեղքը բարդել միայն կնոջ վրայ, պէտք է լսել նաեւ նրա խօսքն ու պատճառաբանութիւնները: Պահանջում էր, որպէսզի արտամուսնական կապերից ծնուած երեխաները անպայանօրէն իրաւական պաշտպանութիւն գտնեն: Նա իրաւացիօրէն պնդում էր, որ «Ընտանիքին իրաւունքները կը պատկանին ոչ միայն այր մարդուն, այլեւ կնոջ ու տղոց» եւ համոզուած էր, որ թէպէտ իր մտքերը հակառակ են եւ «գուցէ համաձայն չեն Դուրանին կամ Շերիին», սակայն համաձայն են «Արդարութեան եւ Սահմանադրութեան սկզբունքներուն»: Անդրադառնալով կնոջ իրաւահաւասարութեան եւ ազատագրութեան հարցերին Զոհրապը համարձակօրէն յայտարարում է. «Ես ամենէն մեծ յանգամանք

81 Ազատամարտ, Կ. Պոլիս 1911, մայիս 13/16, թիւ 4433:

82 Արեւմտահայ գրողների մամականի, էջ 53:

83 Ազատամարտ, 1910, յուլիս 14/2, թիւ 27, թիւ 333, 206-207:

այր մարդուն քով կը գտնեմ՝ նոյնիսկ ընկերային արդի պայմաններու տեսակետէն, վասնզի այրերը շատ աւելի դիւրութիւններ ունին, քան կիները իրենց ուզածին պէս ապրելու: Տակաւին պէտք եղածէն ալ աւելի անդին կ'անցնին, այն ատեն աւելի պէտք է պատիժ կրելու ըլլան, քան կիները»⁸⁴:

Այսուհանդերձ կնոջ ազատութեան եւ կրթութեան հարցում Զոհրապն ունէր խիստ պահպանողական դիրքորոշում: «Հայրենիք»-ում տպագրեց «Ինչու՞ երիկ մարդիկ չեն ամուսնանար շատ ուսեալ աղջիկներու հետ» յօդուածը⁸⁵, որտեղ զարգացնում է այն գաղափարը, որ կնոջը պէտք է սիրել սրտի եւ ոչ մտքի համար եւ յայտնում է հետեւեալ տարօրինակ կարծիքը՝ «Ուսեալ կին մը՝ կին ըլլալէ կը դադարի իմ աչքիս»: Ռ. Պէրպէրեանը նոյն թերթում հանդէս է գալիս «Ուսեալ կիներ» քննադատական յօդուածով, որտեղ ընդդիմանում է Զոհրապին, մասնաւորապէս մատնանշելով: «Բիչեր կան ձեզ մօտ քաղմանիւղ հմտութիւն ստացած. մէկէ աւելի վկայականներ ունիք ձեր գրպանին մէջ, լեզուագէտ, քանակագէտ, իրաւագէտ, գրագէտ, վիպագիր ու հրապարակագիր էք, մէկ քառով զարգացեալ մտքերէն մին էք դուք»⁸⁶ եւ զարմանք է յայտնում, որ նրա պէս մտաւորականը կարող է այսօրինակ անհիմն ու զաւեշտական տեսակէտ յայտնել կնոջ մասին: Նրա դէմ քննադատական յօդուածով հանդէս եկաւ նաեւ Սիպիլը: «Հայրենիք»-ում նա տպագրեց «Ուսեալ՝ թէ անուս» յօդուածը, որտեղ նկատի ունենալով Զոհրապի յետադիմական ըմբռնումներն այդ հարցի վերաբերեալ գրում է. «Ըսել թէ աղջիկ մը պէտք է տգետ ըլլայ, թէ պէտք է իր միտքը վայրենի անտառներու պէս անտաշ ու անյարդ մնայ՝ այն միակ մեղքն է, զոր չենք կրնար ներել մինչեւ իսկ ամենէն շատ շփանալու իրաւունք ունեցող գրիչներուն»⁸⁷:

Զոհրապը «Մասիս»-ում տպագրեց «Մեր աղջկանց» վարժարանները յօդուածը, որտեղ առաջ քաշեց ընտանեկան դաստիարակութեան եւ ընտանիքի բարոյահոգեբանական հարցեր: Նա պահանջում է ուսուցման բովանդակութեան մէջ մտցնել յատուկ առարկայ (Ընտանիքագիտութիւն՝ Շ. Ո.), որը բացի կարուստէ-լից, երաժշտական գործիքների վրայ նուազելուց աղջիկներին

84 Բիւզանդիոն, 1911, ապրիլ 6/19, թիւ 4404, նաեւ՝ Ազատամարտ, 1911, ապրիլ 6/11, թիւ 557:

85 Հայրենիք, Կ. Պոլիս 1892, թիւ 130:

86 Հայրենիք, 1992, փետրուարի 16/23, թիւ 145, 152:

87 Անդ, 1892, մարտի 7, թիւ 165:

կը պատրաստի ապագայ ընտանիքի համար, նրանց մէջ կը դաստիարակի ընտանեսիրութիւն, մաքրակենցաղութիւն, տնտեսավարութիւն եւ այլն: Նա իրաւացիօրէն գտնում էր, որ իգական վարժարաններն աղջիկներին պէտք է ծանօթացնեն «էրիկ մարդ արարածի գոյութիւնը ...կանուխէն բացատրեն անոր հետ իբրեւ մայր, քոյր կամ կի՛ն ունենալի՛ք անհրաժեշտ կապերը, յարաբերութիւնները, փոխադարձ երջանկութեան նպատակովը այդ կապերը մաքուր եւ ամուր պահելու պէտքը սորվեցնեն յատուկ գիտութեան մը պէս»⁸⁸:

«Մասիս»-ում մէկը միւսի ետեւից տպագրւում են նրա յօդուածները մանկավարժութեան տարբեր հիմնահարցերի շուրջ: Այսպէս, օրինակ, «Ուսուցչական ժողով» յօդուածում Զոհրապը քննադատում է մանկավարժական գործընթացի միօրինակութիւնը, ուսուցիչների խանդավառութեան եւ տարակարծութեան բացակայութիւնը: Ուսուցչական ժողովը պատկերաւոր ձեւով նա համեմատում է «միօրինակ հագուստների» հետ, որոնք փորձում են «ամէնուն պատշաճեցնել» կամ մոճակի «որուն մէջ ամէնուն ոտքը սղմելու դատապարտուած ըլլայ»: Յօդուածի վերջում Զոհրապը ներկայացնում է գործնական առաջարկներ դաստիարակութեան եւ կրթութեան վերաբերեալ⁸⁹: «Վարժարանաց շուրջը» յօդուածն ուղղուած է ձեւական ուսուցման դէմ, երբ տարեվերջեան քննութիւնները վեր էին ածւում ցուցադրական միջոցառումների՝ դառնալով «պարզ ձեւականութիւն մը»: Նա դպրոցներից պահանջում էր. «Տասնի տեղ երկու շրջանաւարտ տուէ՛ք մեզի, բայց լուրջ եւ տոկուն հոգիներ ըլլան երկու՛քն ալ»⁹⁰:

«Ուսուցիչներ» յօդուածում առաջ է քաշւում բարձրակարգ ուսուցիչներ պատրաստելու խնդիրը, առաջարկւում է նրանց գործողել Եւրոպա՝ մասնագիտական կրթութիւն ստանալու: Նա պնդում էր, որ տեսական կրթութեան հետ մէկտեղ սովորողները պէտք է ստանան նաեւ գործնական եւ մասնագիտական հիմնաւոր կրթութիւն⁹¹:

«Կրթական կանոնագիր» յօդուածում բանավիճում է Ռ. Պէրպէրեանի հետ՝ «Ուսուցիչներ» յօդուածի վերաբերեալ նրա արած դիտողութիւնների շուրջ⁹²: «Առաջ թէ ետ» յօդուածում

88 Մասիս, 1892, յուլիսի 11, թիւ 3964, 141-142:

89 Անդ, թիւ 3967, 189-190:

90 Անդ, թիւ 3981, 289-290:

91 Անդ, թիւ 3994, 327-338:

92 Անդ, թիւ 3996, 376-377:

անդրադառնում է ուսուցիչների սոցիալական վիճակին, համա-
կարծիք չէր նրանց հետ, ովքեր հաւաստիացնում էին, որ իբր
ուսուցիչների բարոյական եւ նիւթական վիճակը բարւոքուել է:
Մինչդեռ Զոհրապի կարծիքով ուսուցիչները դեռեւս «արժանա-
պատուութեան տեսակետով շատ պակաս են» նախորդ սերնդի
«պատուելիներին», ընկրկում են դժուարութիւնների առջեւ, չեն
պայքարում «թաղական անիրաւութեանց դէմ», եւ շարունակում
են հանդուրժել հոգաբարձուների, թաղային «հեղինակութիւննե-
րի» եւ այլոց նուաստացումները եւ այլն⁹³:

«Աւելը» յօդուածով հասարակութեան ուշադրութիւնը հրա-
ւիրում է դպրոցների եւ ուսուցիչների «ողորմելի գործունեու-
թեան» վրայ, ուսումնական խորհրդից պահանջում է. «Թող Աւելը
ձեռք առնէ... եւ մաքրէ մեզ ի չորս գործողութիւն չգիտցող թուա-
քաններէ եւ ուղղագրութիւն չսորվող հայկաբաններէ»⁹⁴: Հ. Ասա-
տուրի վկայութեամբ սոյն յօդուածը «սեպտեմբեր 1-ին աղմուկ է» առա-
ջացրել, սակայն գտել է մեծ ընդունելութիւն: «Աւելն ետքը» յօ-
դուածում պաշտպանում է այն գաղափարը, որ «ուսուցչութիւնը
ոեւէ մասնագիտութեան աւելի քան մըն է», հետեւաբար՝ անհրա-
ժեշտ է ոչ թէ վարժապետանոց բացել ինչպէս ծրագրել էր Ու-
սումնական խորհուրդը, այլ ամէն տարի մի քանի արժանաւոր-
ների գործուղել Եւրոպա «որպէսզի պէտք եղած ուսումը ու գա-
րագցումը առնեն»⁹⁵:

«Գերմաներէնը մեր վարժարաններուն մէջ» յօդուածում⁹⁶ մատ-
նանշում է, որ չպէտք է հրապուրուել միայն ֆրանսերէնով, ան-
հրաժեշտ է ուշադրութիւն դարձնել նաեւ այլ լեզուների, մասնա-
ւորապէս գերմաներէնին, որի իմացութիւնը կարեւորում էր
ինչպէս գիտական ու գեղարուեստական, այնպէս էլ գործնական
կեանքի առումով:

Ի շարս բազմաթիւ հարցերի Զոհրապն անդրադարձել է
նաեւ աւագ ու կրտսեր սերունդների փոխյարաբերութեան հար-
ցին, մի հարց, որը նոյնքան հին է որքան մարդկային հասարա-
կութիւնը եւ որի արմատները հասնում են մինչեւ անտիկ շրջ-
անները: Այդ կապակցութեամբ «Հայրենիք»-ում (1892, յունուարի
9, թիւ 107) տպագրում է «Մեծերը եւ պոտիկները մեր հասարա-

93 Անդ, 1893, քիւ 4003, 481-482:

94 Մասիս, 1898 փետրուարի 9/21, քիւ 7:

95 Անդ, փետրուարի 10/22, քիւ 8:

96 Անդ, մայիսի 6/18, քիւ 79:

կուրսեան մէջ» յօդուածը, որտեղ ըստ ամենայնի կարեւորելով աւագ սերնդի դերը, նրա ձեռքբերումները ինչպէս գրականութեան եւ արուեստի մէջ, այնպէս էլ հասարակական կեանքի բոլոր ասպարէզներում, այսուհանդերձ իրաւացիօրէն նրանց մեղադրում է կրտսերների եւ նրանց նախաձեռնութիւնների հանդէպ անտարբեր մնալու, քամահրանքով վերաբերուելու եւ վստահութիւն չցուցաբերելու մէջ, մինչդեռ նրանք «ազգային ասպարէզին վրայ կ'երեւան հնչեցնելով, ուժգին հնչեցնելով իրենց ոսկոյ դէզերն»:

Այսպիսով՝ ակնյայտ երեւում է, որ ժամանակի մամուլը⁹⁷ հեղեղուած է Զոհրապի ծրագրային յօդուածներով ու խմբագրականներով, որոնց հանգամանալից վերլուծութեամբ՝ իրաւաբանփաստաբանի, դիւանագէտ-օրէնագէտի, քննադատ-հրապարակախօսի, բանաստեղծ-նովելիստի կողքին իր ամբողջ վեհութեամբ մեր առջեւ վեր կը յառնի լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան մեծ ջատագովի պայծառ կերպարը:

Համաշխարհային պատերազմը նպաստաւոր պայմաններ ստեղծեց իթթիհատականների փայփայած վաղեմի ծրագրերն իրագործելու համար: Այդ ծրագրերի կարեւոր մասը Պոլսի մտաւորականների զանգուածային ձերբակալութիւններն ու աքսորի ճանապարհին նրանց հետ թուրքավարի հաշուեյարդար տեսնելն էր:

1915ի ապրիլի 24ին ոստիկանութիւնը նախապէս կազմած ցուցակներով Պոլսում ձերբակալեց 235 մտաւորականների, այդ թւում նաեւ Կոմիտասին (1869-1935), Սիամանթոյին, Դանիէլ Վարուժանին (1884-1915), Ռուբէն Սեւակին (Զիլինկիրեան.- 1885-1915), Ռուբէն Զարդարեանին, Նազարէթ Տաղաւարեանին եւ այլոց: Յետագայ օրերին ձերբակալութիւնները շարունակուեցին ինչպէս Պոլսում, այնպէս էլ արեւմտահայ գաւառներում: Զերբակալուածների թիւը հասաւ 800ի, որոնց ուղարկեցին Այաշ ու Զանդըրի⁹⁸: Այդ օրերի ձերբակալութիւնների մասին Զոհրապը արձանագրում է. «Ես, ահա, ազատ, դեռ այս ձերբակալուածներուն գլուխ կը գտնուիմ եւ գիտեմ, թէ ինչ պատճառով ինծի խնայուած է»⁹⁹:

97 Մեր կողմից դիտարկուել է ընդամենը «Մասիս»ի մի քանի համարներում Զոհրապի տպագրած յօդուածները, մինչդեռ այդ շրջանի արեւմտահայ մամուլը լեփ-լեցուն է նրա հրապարակած մանկավարժական յօդուածներով, որոնք կարիք ունեն համակարգման, ամբողջացման եւ մանկավարժական լուրջ հետազոտման:

98 ՀԺՊ, հտ 6, 553-554:

99 Անդ:

Սակայն նրան էլ չխնայեցին...

Մայիսի 20-ին Բերայի ոստիկանապետը մի խումբ մաուզերիստների հետ ձերբակալում է Զոհրապին եւ տանում Ղալաթասարայի ոստիկանատուն, որտեղից չորս զինուորի, գաղտնի ոստիկանի եւ ոստիկանական կոմիտէի ուղեկցութեամբ շոգենաւով տեղափոխում են Հայդար փաշայի կայարան: Նոյն օրը առաւօտեան նրան նստեցնում են գնացք, գաղտնի ոստիկանների ու կոմիսարի ուղեկցութեամբ ճանապարհում են Գոնիա¹⁰⁰: 1915ի յուլիսի 16-ին նրան տեղափոխում են Ուրֆա, որտեղ թուրքական իշխանութիւնների գաղտնի հրամանով սպանում են ճանապարհին: Թուրքական իշխանութիւնների հրահանգով ստեղծւում է կեղծ տեղեկագիր, ըստ որի իբր Դիարբեքիր մեկնելու ճանապարհին «սրտի հիւանդութեւն կաթուածահար եղած է»¹⁰¹:

Յօդուածն ամփոփենք Ալպոյաճեանի ցաւով արձանագորուած, սակայն հպարտութիւն ներշնչող հետեւեալ քաղուածքով՝ «Արիւնարբու վոհմակի մը եւ կատաղի գազաններու ձեռքով զինուած արիւնկզակ ոքրագործը, գէնքերուն ամենէն նախնականովը՝ անտաշ ու կոպիտ քարով ճգմած էր իմացականութեան գործարանը՝ ուղեղը. հանճարեղ մարդուն՝ որ պատիւն էր իր ցեղին որուն ամեն քանէն առաջ միտքը ջախջախել կ'ուզէին»:

Ապագայ Անկախ Հայաստան եթէ իր մտացի ու վառվռուն այս գաւկիմ բաղդը չպիտի ունենայ ընծայելու երեսփոխանական աթոռ կամ նախարարական պաշտօն եւ Հայեր՝ Վերածնունդ Հայրենիքին մէջ երջանկութիւնը չպիտի ունենան լսելու իր կենդանի ու աշխոյժ խօսքը, որ միայն ինքը գիտէր ընել, գէթ ապագայ սերունդներ պիտի կարդան եւ միշտ պիտի յիշեն զինքը իբր մէկը անոնց որ իր քաղաքակրթութեան շէնքը հիւսեցին եւ անոր ազատագրութեան փառաւոր գործը երկնեցին...»¹⁰²:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

100Գաթ, Հոփսիսմէ Սերինկիւլեանի ֆոնդ, ք. 3/5:

101Ա.Լ.ՊՈՅԱՃԵԱՆ, Ա., *Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կեանքը եւ իր գործը)*, Կ. Պոլիս 1919, 247-248:

102Անդ, 252:

Summary

GRIGOR ZOHRAP AND HIS TIME (1861-1915)

SHOGHIK VOSKANIAN

150th birth anniversary of G. Zohrap will be celebrated on June 2011. This article is devoted to his life and carrier, to the interpretation of this famous writer, journalist and layer's activities, and to his national and pedagogical opinions.

G. Zohrap lived a short but significant and rich life. He was a man having exceptional capacities and unlimited intellectual possibilities, which remarkable evidence is given by his works' variety: poetry, fiction, journalism, edition of books, literary criticism, biographies; he was also a layer, orator, national and statesman, which evidently shows the he was a man of enigmatic life, a man "unique in his exceptionality and who remained unique until the end". No one of his contemporaries ever has been so deeply studied as G. Zohrap. He is one of the most investigated, but never definitely studied, and one of the most interesting figures of the Western Armenian culture.

The most part of the life and activities of G. Zohrap took place during the tyrannical regime of Sultan Hamid, while Turkey and nations under its domination were constrained to live in awful conditions of unspeakable juridical, economical and cultural pressure. In 1878, after the Berlin Congress, when Hamid's program of Armenians' physical extermination and the catchword "Armenia without Armenians" were meant to realization, one might have exceptional force, will and energy to not only struggle, but also create. G. Zohrap was among the few persons who struggled with all accessible and inaccessible means: creation, journalism, appeals to different juridical instances and parliaments (state and national), secretly and publicly, using his personal ties and relations.

Zohrap's struggle and protest against violence, injustice, and men's rights violation weren't only limited by national frames. He courageously fought against international tyranny, trampling on men's rights, national discrimination, ethnic intolerance and racism.

The years between 1908 and 1915 were G. Zohrap's public, political, literary and cultural activities' most fertile period, when he was a member of Turkish Parliament and Armenian National Assembly; he was elected in almost

all elections and participated with great energy to electoral activities, came out with legislative long speeches and reports, put forward information and theses in conformity with European criteria.

In the conditions of Hamid's military and administrative tyranny Zohrap was a prominent national and political figure, an unequaled orator and critic, fighting boldly, courageously and with admirable devotion in order to make the life of his suffering nation more or less supportable. The most part of his parliament speeches were full of critical observations against the inhumane and reactionary policy of the Ottoman regime.

As numerous other people did, Zohrap felt himself concerned by the Armenian problem. Foreseeing the anti-Armenian political intentions of the Ittihadist party, on his own initiative he carried out negotiations with diverse countries' ambassadors in order to introduce some reforms in Armenian provinces.

On May 1913, a brochure by Zohrap was printed in Paris under the pseudonym Marcel Lnard. It was entitled *The Armenian Problem in the Light of Documents* and contained huge documental material about the political situation of Western Armenians, their culture, schools and economical condition. This publication is an important document either about the political and cultural life of Western Armenia at the end of the 19th and the beginning of the 20th century, or the study of modern history of Armenia.

There are not pedagogical works in the literary legacy of G. Zohrap and he scarcely was busy practicing pedagogy. Nevertheless he was well acquainted with the problems of national school and took active participation in their solution, as well as school reform activities. He excellently mastered advanced pedagogical theories, have read works of classical pedagogy and knew its pedagogical doctrines. Besides, his novels and short stories, alongside with their artistic value, are also of great instructive, educational and psychological importance; so their role in the education of young generations can hardly be overestimated.